Զեկույց

ՀԸԳՀ-ի Հոդված 95-ի իրականացման մշտադիտարկման՝ Երիտասարդական աշխատողների կրթությունը

Հեղինակ՝ Մարինա Գալստյան

Երևան 2025

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Մարինա Գալստյանը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԸԳՀ/CEPA	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ՖՔ	Ֆոկուսխմբային քննարկում
NEET	«ոչ-ոչ» խումբ, այն է՝ կրթությունից, վերապատրաստումներից և աշխատաշուկայից դուրս մնացած խումբ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
UNICEF	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ 9
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 11
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 17
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 21
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 30
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 35
ՀԱՎԵԼՎԱԾ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ 37

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) ապահովում է Հայաստանի և ԵՄ-ի համագործակցության շրջանակ՝ ի շահ Հայաստանի քաղաքացիների: «Աջակցություն ՀԸԳՀ-ի մոնիտորինգին, իրականացմանը և հաղորդակցությանը» քառամյա ծրագիրը (հետայսու՝ Ծրագիր) ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը հանրային կառավարումը ՀԸԳՀ-ի ներքո բարեփոխելու գործում:

Սույն մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրվել է ՀԸԳՀ-ի իրականացումը երիտասարդությանն առնչվող Հոդված 95-ի մասով: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են այն դրույթները, որոնք վերաբերում են քաղաքականության և երիտասարդների ու երիտասարդական աշխատողների ոչ ֆորմալ կրթության ոլորտներում համագործակցությանը ու փոխանակումներին, ինչպես նաև երիտասարդների ու երիտասարդական աշխատողների շարժունակության աջակցությանը:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը ներառում է տվյալների հավաքագրում երիտասարդներից, երիտասարդական աշխատողներից, երիտասարդական քաղաքականություններ մշակողներից, դասընթացավարներից, երիտասարդական հարցերի գծով փորձագետներից, հետազոտողներից և առաջնորդներից:

Երիտասարդական աշխատանքի հմտությունների մասին պատկերացումները տարբեր են Եվրոպայի տարբեր երկրներում: Հմտությունները գլխավորապես ազգային մակարդակում են կանոնակարգվում: Եվրոպայի Խորհուրդը (ԵԽ) մշակել է երիտասարդական աշխատանքի համար անհրաժեշտ կարողությունների շրջանակ (պորտֆոլիո): Պորտֆոլլիոն երիտասարդական աշխատանքի կարողությունները գնահատելու և դրանց զարգացումը պլանավորելու գործիք է: ԵԽ-ի պորտֆոլիոն ծառայում է թե՛ որպես երիտասարդական աշխատողների կրթության ստանդարտ, թե՛ որպես ուղղորդող շրջանակ: Պորտֆոլիոն կիրառվել է նաև որպես սույն մշտադիտարկման ուղենիշ (benchmark):

ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզում երիտասարդության ոլորտի համար ուրվագծված միջոցառումները ներդրվել են, սակայն հստակ ցուցիչների բացակայության պատճառով դժվար է գնահատել ՀԸԳՀ-ի իրական ազդեցությունը երիտասարդության ոլորտի վրա:

Հայաստանում մշակվել է երիտասարդական աշխատողների համար նախատեսված վերապատրաստման ծրագիր/դասընթաց՝ համաձայն ԵԽ-ի պորտֆոլիոյի: Այնուհանդերձ, երիտասարդական աշխատողները և փորձագետները շեշտում էին, որ թեև հայաստանյան դասընթացն արդյունավետ է փորձառու երիտասարդական աշխատողների համար, սկսնակ երիտասարդական աշխատողներին այն չի տալիս տարրական գիտելիքներ ու կարողություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարական

աշխատանքի համար: Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ հայաստանյան դասընթացի մոդուլներն ուղղված են երիտասարդական աշխատողների շրջանում ընդհանուր ունակությունների զարգացմանը, մինչդեռ ավելի կոնկրետ կարողությունների զարգացման համար երկարաժամկետ ուսումնական ծրագիր է պահանջվում:

Փոխանակումները և վերապատրաստումները նպաստել են, որպեսզի փոխվի երիտասարդության մասին օրենքի մշակման շեշտադրումը: Նախքան համապատասխան այցերը այն անվանվում էր «Երիտասարդության մասին» օրենք, բայց հետագայում երիտասարդական քաղաքականություններ մշակողները վերանվանեցին այն «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենք: Երիտասարդական քաղաքականություններ մշակողները և երիտասարդական աշխատողները, որոնք մասնակցել են վերոնշյալ այցերին, հնարավորություն են ունեցել գիտելիքներ ձեռք բերել ու պատկերացում կազմել մասնակցության գործիքների, մասնակցային մոտեցումների, համայնքային երիտասարդական աշխատանքի և տարբեր տարիքային խմբերի երիտասարդների հետ աշխատանքի մասին: Փորձագետները նշել են, որ այս այցերը և վերապատրաստումները կարող էին ավելի արդյունավետ լինել և ավելի մեծ ազդեցություն ունենալ հայաստանյան երիտասարդության վրա, եթե նախապես ուսումնական ծրագիր կազմվեր: Ուսումնական ծրագիրը պետք է ներառեր ուսումնական հարցեր և հստակ սահմաններ այն տեղեկատվությունը և գիտելիքները, որոնք մասնակիցները ցանկանում էին ձեռք բերել այցի ընթացքում: Երիտասարդական աշխատողների համար արդյունավետ էր ծանոթանալ երիտասարդների հավաքագրման ն փորձին և տեղեկանալ, թե ինչպես ներգրավել վերջիններիս երիտասարդական կենտրոնների գործունեության մեջ: Այս փորձը կիրառվել է Դիլիջանի երիտասարդական կենտրոնում և ներառել է այցելություն դպրոց ու երիտասարդների հետ նախնական աշխատանք: Մենք կարող ենք եզրակացնել, որ համապատասխան հոդվածով նախատեսված միջոցառումներն իրականացվել են: Այնուհանդերձ, քանի որ չկան պլանավորված միջոցառումների գնահատման չափելի ցուցիչներ, դժվար է գնահատել հոդվածի իրականացման որակը:
Միջազգային փոխանակման ծրագրին մասնակցած երիտասարդական աշխատողները ձեռք են բերել կարողություններ և գիտելիքներ համայնքային երիտասարդական աշխատանքի մասին: Եվրոպական երիտասարդական մայրաքաղաք կատարած այցի արդյունքում երիտասարդական աշխատողը կարողացավ մոբիլիզացնել համայնքին, և 2025 թ.-ին այն դարձավ Հայաստանի երիտասարդական մայրաքաղաքը: Այս հոդվածն ամբողջությամբ չի իրականացվել, քանի որ նախարարությունը երիտասարդական աշխատողի այցի վերաբերյալ բանակցություններն սկսել է 2024 թ.-ին, սակայն այն դեռևս տեղի չի ունեցել:
ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզի վերաբերյալ հիմնական առաջարկությունները հետևյալն են՝ մշակել ՀԸԳՀ-ի քարտեզի որակական և քանակական ցուցիչներ երիտասարդության ոլորտի համար, երիտասարդական աշխատողների համար

նախատեսված դասընթացները համապատասխանեցնել ԵԽ-ի Պորտֆոլիոյի շրջանակին, սկսնակ երիտասարդական աշխատողների համար ներդնել ատեստավորման հմտահեն (հմտությունների վրա հիմնված) մոդուլային ծրագիր, որը կհամապատասխանի ԵԽ-ի Երիտասարդական աշխատանքի պորտֆելին, ներառել մենթորության և փորձառության հիման վրա ուսումնառության բաղադրիչներ, իրականացնել երիտասարդական աշխատանքում պահանջված հմտությունների քարտեզագրում՝ ելնելով երկրի կոնկրետ կարիքներից, իրականացնել հետազոտություններ և սահմանել փորձի փոխանակման ու ուսումնական այցերի թեմաների և թեմատիկ ոլորտների հստակ շրջանակ, ինչպես նաև զարգացնել երիտասարդական ծրագրերի, երիտասարդական կենտրոնների և քաղաքականությունների մշտադիտարկման ու գնահատման համակարգը՝ ապահովելով երիտասարդների ներգրավվածությունը այս գործընթացում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) ապահովում է Հայաստանի և ԵՄ-ի համագործակցության շրջանակ՝ ի շահ Հայաստանի քաղաքացիների[1]: «Աջակցություն ՀԸԳՀ-ի մոնիտորինգին, իրականացմանը և հաղորդակցությանը» քառամյա ծրագիրը (հետայսու՝ Ծրագիր) ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը հանրային կառավարումը ՀԸԳՀ-ի ներքո բարեփոխելու գործում: Սույն մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրվել է ՀԸԳՀ-ի իրականացումը երիտասարդությանն առնչվող Հոդված 95-ի մասով: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են այն դրույթները, որոնք վերաբերում են քաղաքականության և երիտասարդների ու երիտասարդական աշխատողների ոչ ֆորմալ կրթության ասպարեզներում համագործակցությանը ու փոխանակումներին, ինչպես նաև երիտասարդների ու երիտասարդական աշխատողների շարժունակության աջակցությանը:

Երիտասարդական աշխատող. Երիտասարդական աշխատողներն անձինք են, որոնք աշխատում են անմիջականորեն երիտասարդների հետ և իրականացնում են նրանց անձնային և սոցիալական զարգացմանն ուղղված գործունեություն ոչ ֆորմալ կրթության միջոցով: Երիտասարդական աշխատողները կարող են լինել մասնագետներ կամ կամավորներ, քաղաքացիական ծառայողներ կամ ՀԿ-ների աշխատակիցներ[2]:

[1] https://www.eeas.europa.eu/eeas/comprehensive-enhanced-partnership-agreement-between-european-union-armenia-cepa_en

[2] Եվրոպական Հանձնաժողով (2015), Որակյալ երիտասարդական աշխատանք: Երիտասարդական աշխատանքի հետագա զարգացման համընդհանուր շրջանակ: ԵՄ անդամ պետություններում երիտասարդական աշխատանքի որակի ապահովման համակարգերի գծով փորձագիտական խմբի

Երիտասարդական քաղաքականություն. Երիտասարդական քաղաքականության նպատակն է ստեղծել ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ, հնարավորություններ ու փորձ, որոնք երիտասարդներին հնարավորություն կընձեռեն զարգացնել իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Սրա նպատակն է թույլ տալ երիտասարդներին իրենց դերակատարումն ունենալ ժողովրդավարության կայացման/զարգացման գործում, ինտեգրվել հասարակության մեջ և մասնավորապես հնարավորության տալ նրանց ակտիվ դեր խաղալ թե՛ քաղաքացիական հասարակությունում, թե՛ աշխատանքային շուկայում: Երիտասարդական քաղաքականությունների առանցքային նպատակներից է խթանել քաղաքացիական կրթությունը և ինտեգրված քաղաքականությունների մոտեցումը[3]:

Սույն մշտադիտարկման գլխավոր նպատակն է գնահատել երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների համար նախատեսված կրթության որակը: Մշտադիտարկման շրջանակում գնահատվում է երիտասարդական քաղաքականության և երիտասարդների ու երիտասարդական աշխատողների ոչ ֆորմալ կրթության բնագավառում համագործակցության և փոխանակումների արդյունավետությունը, երիտասարդների, երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների շարժունակությունը որպես միջմշակութային երկխոսության խթանման ու գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման միջոց՝ ֆորմալ կրթական համակարգից դուրս, այդ թվում՝ կամավորության շրջանակում:

Ներկայումս ընթանում է ճանապարհային քարտեզի արդիականացման և ցուցիչների մշակման գործընթաց, ուստի սույն մշտադիտարկման նպատակն է նաև ցուցիչների մշակմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել:

Երիտասարդական աշխատողների կրթական ծրագրերի հիմնական արդյունքների գնահատում

Երիտասարդական աշխատողներն առանցքային դեր են կատարում ոչ ֆորմալ կրթական ծրագրերում, որոնք լրացնում են ֆորմալ կրթական համակարգերը: ՀԸԳՀ-ի ներքո համագործակցության մշտադիտարկման շնորհիվ հնարավոր է գնահատել, թե արդյոք երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների համար նախատեսված կրթական նախաձեռնությունները հասցեագրում են Հայաստանի երիտասարդների կարիքները և երիտասարության ոլորտի առաջնահերթությունները:

զեկույց, էջ 12. https://ec.europa.eu/assets/eac/youth/library/reports/quality-youth-work_en.pdf, ընթերցման ամսաթիվ՝ 2025 թ. մարտի 5

[3] Երիտասարդական քաղաքականության հիմունքներ, https://pjp-eu.coe.int/web/youth-partnership/other-publications, Սիուրալա, Լ. (2005). Երիտասարդական քաղաքականության եվրոպական շրջանակը

Երիտասարդական աշխատողների կարողությունների ու հմտությունների զարգացում

Մշտադիտարկումն օգնում է հետևել և արձանագրել, թե երիտասարդական քաղաքականություններ մշակողներն ու երիտասարդական աշխատողները որքան արդյունավետորեն են ձեռք բերում կարողություններ, գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին աջակցելու և կրթելու համար: Սա ներառում է այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են քաղաքացիական կրթությունը, առաջնորդությունը, թվային գրագիտությունը և ժողովրդավարական ներգրավվածությունը, որոնք կենսական նշանակություն ունեն իրազեկ և ակտիվ քաղաքացիական հասարակության ամրապնդման գործում:

Սույն հաշվետվությունն անդրադառնում է այնպիսի ոլորտների, որոնք առանցքային են երիտասարդական աշխատողների կրթության ու տվյալ բնագավառում ՀԸԳՀ-ի իրականացման ներկայիս վիճակի մասին պատկերացում կազմելու համար: Հաշվետվությունը կազմված է հետևյալ բաժիններից՝ Մեթոդաբանություն, Եվրոպական փորձ, Հայաստանում երիտասարդական քաղաքականության ներկայիս վիճակը, Հայաստանի երիտասարդական աշխատողների կրթությունը, Եզրակացություններ, որոնցում ներկայացվում է ՀԸԳՀ-ի իրականացման ներկայիս իրավիճակը և համաձայնագրի իրականացման ու ճանապարհային քարտեզի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը ներառում է տվյալների հավաքագրում երիտասարդներից, երիտասարդական աշխատողներից, երիտասարդական քաղաքականություններ մշակողներից, դասընթացավարներից, երիտասարդական հարցերի գծով փորձագետներից, հետազոտողներից և առաջնորդներից:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Եվրոպայում երիտասարդական աշխատանքի հմտությունների մասին տարաբնույթ ընկալումներ կան: Հմտությունները գլխավորապես ազգային մակարդակում են կանոնակարգվում: ԵԽ-ն մշակել է երիտասարդական աշխատանքի հմտությունների շրջանակ (պորտֆոլիո): Պորտֆոլիոն երիտասարդական աշխատանքի հմտությունները գնահատելու և դրանց զարգացումը պլանավորելու գործիք է[4]:

ԵԽ-ի պորտֆոլիոն կծառայի որպես հիմնական եվրոպական ստանդարտ՝ Հայաստանում երիտասարդական աշխատողների կրթության համեմատական գնահատում անցկացնելու համար:
Հաշվի առնելով ՀԸԳՀ-ի իրականացմանն ուղղված միջոցառումների շրջանակը՝ մշտադիտարկումը միտված է գնահատել, թե ինչպես են տվյալ գործողությունները նպաստել հետևյալ ակնկալվող արդյունքների իրականացմանը.

[4] Երիտասարդական աշխատողների կրթության և վերապատրաստման՝ հմտությունների շրջանակները և հմտահեն մոտեցումները հինգ եվրոպական երկրներում, էջ 13

ա) (a) Երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացում, փորձի փոխանակում,

գ) (c) Երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացում, ոլորտի հաջողված փորձի ներկայացում:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը ներառում է տվյալների հավաքագրում երիտասարդներից, երիտասարդական աշխատողներից, երիտասարդական քաղաքականություններ մշակողներից, դասընթացավարներից, երիտասարդական հարցերի գծով փորձագետներից, հետազոտողներից և առաջնորդներից: Մասնավորապես՝ կիրառվել են հետևյալ մեթոդները.

Երկրորդային տվյալների հավաքագրում

- Երիտասարդության ոլորտի հարցերի մասին առկա հետազոտությունների, վիճակագրական տվյալների, երիտասարդների ու երիտասարդական աշխատողների վերաբերյալ կարգավորումների ուսումնասիրություն:

Առաջնային տվյալների հավաքագրում

- Ֆոկուս խմբային քննարկումներ (ՖՔ) երիտասարդների շրջանում,

Երիտասարդների շրջանում իրականացվել է երկու ՖՔ:

- Երիտասարդական աշխատողների հետ խորքային հարցազրույցներ,

Երեք խորքային հարցազրույց է իրականացվել

- Փորձագիտական հարցազրույցներ երիտասարդության հարցերով փորձագետների և դասընթացավարների հետ,

Երեք փորձագիտական հարցազրույց է իրականացվել

- Առանցքային տեղեկատուների՝ երիտասարդական քաղաքականություններ մշակողների հետ հարցազրույցներ:

Չորս փորձագիտական հարցազրույց է իրականացվել՝

1. Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի Համագործակցության և բարեփոխումների վարչության առաջատար մասնագետ
2. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Երիտասարդության հարցերի վարչության պետ
3. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Ռազմավարական պլանավորման և մոնիտորինգի վարչության պետ

4. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Ռազմավարական պլանավորման և մոնիտորինգի վարչության գլխավոր մասնագետ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Երիտասարդական աշխատանք

Երիտասարդական աշխատանքի տարբեր սահմանումներ կան: Որոշ երկրներում երիտասարդական աշխատանքը հարաբերականորեն լավ սահմանված և հստակ գործունեության ոլորտ է: Այլ երկրներում (հատկապես՝ Հարավային Եվրոպայի երկրներում) այս եզրույթը պակաս հայտնի է, և չկա երիտասարդական աշխատանքի համընդհանուր, նույնականացվելի հասկացություն: Այնուամենայնիվ, բոլոր երկրներում նկատվում է, թե ինչպես է սոցիալական և կրթական պրակտիկաների հստակ, բայցև բազմազան ոլորտը ձևավորում այսպես կոչված «սոցիալականացման երրորդ միջավայր»՝ ի լրումն ընտանիքի և դպրոցի: Ինչ վերաբերում է երիտասարդական աշխատանքի թիրախային խմբին, նկատելի է, որ մի շարք երկրներում երիտասարդական աշխատանքը սահմանափակվում է երիտասարդների (15-25 տարեկան) հետ աշխատանքով, իսկ այլ երկրներում (օրինակ՝ Բելգիա, Գերմանիա, …) չկա հստակ տարբերակում երեխաների հետ աշխատանքի և երիտասարդական աշխատանքի միջև: Նկատվում են նաև երիտասարդների հետ մշակութային աշխատանքի կամ բարեկեցության ապահովմանն ուղղված աշխատանքի տարբերություններ, ինչը մի շարք երկրներում հանգեցնում է ցայտուն բաժանարար գծերի «երիտասարդների հետ երիտասարդական աշխատանք» և «երիտասարդներին ուղղված երիտասարդական աշխատանք» պայմանական հասկացությունների միջև: Այնուհանդերձ, երկրների մեծ մասում առկա է երիտասարդական աշխատանքը լայն տեսանկյունից դիտարկելու հստակ միտում, որի դեպքում տարբերակված պրակտիկաները միավորվում են՝ տարբեր թիրախային խմբերի և բազմաբնույթ նպատակների ընդգրկմամբ:

Էստոնիա. 2010 թ.-ի Երիտասարդական աշխատանքի մասին ակտում երիտասարդական աշխատանքը սահմանվում է որպես այնպիսի պայմանների ստեղծում, որոնք խթանում են երիտասարդների համակողմանի զարգացումը, ինչը նրանց հնարավորություն է ընձեռում իրենց ազատ կամքով ակտիվություն ցուցաբերել իրենց ընտանիքից, ֆորմալ կրթությունից կամ աշխատանքից դուրս:

Ֆինլանդիա. ըստ 2006 թ.-ի Երիտասարդության մասին ակտում ամրագրված սահմանման՝ «երիտասարդական աշխատանք» նշանակում է երիտասարդների աճին, զարգացմանը և սոցիալական ներգրավվածությանն ուղղված ջանքեր:

Իռլանդիա. 2001 թ.-ի Երիտասարդական աշխատանքի մասին ակտում «երիտասարդական աշխատանք» եզրույթը սահմանվում է որպես «կրթության պլանավորված ծրագիր, որը մշակվել է երիտասարդների կամավոր մասնակցության միջոցով վերջիններիս անձնային և հասարակական զարգացմանը նպաստելու և աջակցելու նպատակով, և որը լրացնում է նրանց ֆորմալ, ակադեմիական կամ միջին մասնագիտական կրթությունն ու վերապատրաստումը (դասընթացները) և իրականացվում է գլխավորապես կամավորական հիմունքներով երիտասարդական աշխատանքով զբաղվող կազմակերպությունների կողմից»:

Հյուսիսային Մակեդոնիա. Ըստ Երիտասարդության ազգային ռազմավարության՝ երիտասարդական աշխատանքը «երիտասարդների կրթության ու բնականոն զարգացման կազմակերպված և համակարգային գործընթաց է, որի նպատակն է նրանց ընդհանուր անձնային, հասարակական և քաղաքացիական ներուժի իրացումը. այն ուղղակիորեն կապված է տեղական համայնքի զարգացման հետ, որի շնորհիվ երիտասարդները ոչ միայն իրենց սեփական զարգացման, այլև համայնքային կյանքի ակտիվ մասնակիցներ են դառնում»:

Մալթա. տվյալ հասկացությունը սահմանվում է որպես երիտասարդների անձնային, հասարակական և քաղաքական զարգացմանն ուղղված ոչ ֆորմալ ուսումնական գործունեություն (Երիտասարդական աշխատանքի մասնագիտության մասին ակտ, 2016 թ.):

Մոնտենեգրո. 2016 թ.-ի Երիտասարդության մասին օրենքում երիտասարդական աշխատանքը սահմանվում է որպես գործունեություն, որն իրականացվում է երիտասարդների համար և երիտասարդների հետ ոչ ֆորմալ կրթության հիման վրա՝ նրանց կարիքներին և կարողություններին համապատասխան:

Միացյալ Թագավորություն (Ուելս): Ըստ Ուելսի 2014-2018 թթ. Երիտասարդական աշխատանքի ազգային ռազմավարության՝ երիտասարդական աշխատանքը սահմանվում է Երիտասարդական աշխատանքի ազգային մասնագիտական ստանդարտների օգտագործմամբ՝ (Ուսումնառության և կարողությունների բարելավման ծառայություն, 2012) որպես աշխատանք, որը «երիտասարդներին համակողմանի/լիակատար զարգացման հնարավորություն է տալիս. նրանց հետ աշխատանք է իրականացվում՝ նրանց անձնային, հասարակական և կրթական զարգացմանը աջակցելու, նրանց՝ իրենց ձայնը, ազդեցությունը և տեղը ամրապնդելու և ներուժն ամբողջապես իրացնելու հնարավորություն տալու նպատակով»:

«Երիտասարդական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է երիտասարդական աշխատանքը որպես երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացու ձևավորմանն ուղղված աշխատանք:

Երիտասարդական քաղաքականությունը միտված է երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային և սոցիալական բնույթի այլ հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը և այդ լուծումների շուրջ հանրային խոսույթի ձևավորմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ընդգրկվածության ապահովմանը և որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը»: Երիտասարդական աշխատողը սահմանվում է որպես «անձ, որն իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ վճարովի (համայնքային ծառայության կամ վճարովի ծառայությունների մատուցմամբ կամ աշխատանքային պայմանագրային հարաբերություններով) կամ կամավորության սկզբունքով»:

Երիտասարդական աշխատանքի հմտություն

Եվրոպայում երիտասարդական աշխատանքի հմտությունների մասին տարբեր պատկերացումներ կան: Հմտությունները գլխավորապես ազգային մակարդակում են կանոնակարգվում: Երիտասարդական աշխատանքի հմտությունները սահմանվում են մասնագիտական ստանդարտներով, երիտասարդական աշխատանքի որակական ստանդարտներով, երիտասարդական աշխատանքից ակնկալվող ցանկալի արդյունքների համար իրավական պահանջներ սահմանելով կամ այլ մեթոդներով[5]:

ԵԽ-ն մշակել է երիտասարդական աշխատանքի հմտությունների շրջանակ (պորտֆլիո): Պորտֆոլիոն երիտասարդական աշխատանքի հմտությունը գնահատելու և դրա զարգացումը պլանավորելու գործիք է: Երիտասարդական աշխատանքում հմտությունը ընկալվում է որպես մի հասկացություն, որն ընդգրկում է երեք փոխկապակցված բաղադրիչ.

- **Գիտելիքներ.** Այս բաղադրիչը վերաբերում է այն բոլոր թեմաներին և խնդիրներին, որոնց մասին Դուք գիտեք կամ պետք է իմանաք Ձեր աշխատանքն անելու համար: Սա հմտության «իմացական» բաղադրիչն է: Այն սովորաբար ասոցացվում է «գլխի» հետ:
- **Կարողություններ.** Այս բաղադրիչը արտացոլում է, թե Դուք ինչ կարող եք անել կամ ինչ պետք է կարողանաք անել Ձեր երիտասարդական աշխատանքն իրականացնելու համար: Սա հմտության գործնական բաղադրիչն է, որը համարվում է կարողությունների բաղադրիչն է: Այն հաճախ ասոցացվում է «ձեռքերի» հետ:
- **դիրքորոշումներ և արժեքներ.** Հմտության այս բաղադրիչը վերաբերում է այն դիրքորոշումներին ու արժեքներին, որոնք Դուք պետք է որդեգրեք՝ Ձեր աշխատանքն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Հմտության այս բաղադրիչը հաճախ ասոցացվում է «սրտի» հետ[6]:

[5] Երիտասարդական աշխատողների կրթության և վերապատրաստման՝ հմտությունների շրջանակները և հմտահեն մոտեցումները հինգ եվրոպական երկրներում, էջ 13
[6] Պորտֆել, https://www.coe.int/en/web/youth-portfolio/youth-work-competence,

Պորտֆոլիոն միտված է ավելի լավ պատկերացում տալ այն մասին, թե երիտասարդական աշխատողները ինչ պետք է կարողանան անել և ինչ հմտություններով պետք է օժտված լինեն՝ երիտասարդական աշխատանք իրականացնելու համար: Այլ կերպ ասած, մենք կարող ենք սա անվանել երիտասարդական աշխատանքի գործառույթների համախումբ: Եվրոպայի Խորհրդի Երիտասարդական աշխատանքի պորտֆելը ամենահամապարփակն է: Այն ընդգրկում է 31 հմտություն, որոնք բաժանվում են ութ խմբերի՝ ըստ այն գործառույթների, որոնք կարող են կատարվել երիտասարդական աշխատանքի շրջանակում[7]: Գործառույթների ցանկը հետևյալն է.

Գործառույթ 1. Հասցեագրել երիտասարդների կարիքները և ձգտումները
Գործառույթ 2. Սովորելու հնարավորություններ ընձեռել երիտասարդներին
Գործառույթ 3. Աջակցել և հզորացնել երիտասարդներին, որպեսզի նրանք իմաստավորեն այն հասարակությունը, որում ապրում են, ինչպես նաև առնչվեն դրան
Գործառույթ 4. Աջակցել երիտասարդներին՝ միջմշակութային հարաբերություններին առնչվող հարցերն ակտիվորեն և կառուցողականորեն հասցեագրելու գործում
Գործառույթ 5. Ակտիվորեն կատարել գնահատում՝ իրականացված երիտասարդական աշխատանքի որակը բարելավելու նպատակով
Գործառույթ 6. Աջակցել թիմերի ներգրավվածությամբ հավաքական ուսումնառությանը
Գործառույթ 7. Նպաստել նրանց կազմակերպության զարգացմանը և օժանդակել, որ քաղաքականությունները/ծրագրերը լավագույնս ծառայեն երիտասարդներին
Գործառույթ 8. Ծրագրեր մշակել, իրագործել և գնահատել

Երիտասարդական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ հմտությունները բաժանվում են երկու դասի.

- Երիտասարդական աշխատանքի հատուկ հմտություններ՝ հմտություններ, որոնք գործունեության այս բնագավառը յուրահատուկ են դարձնում,
- Ավելի ընդհանուր հմտություններ՝ հմտություններ, որոնք վերաբերելի են գործունեության այլ բնագավառների, սակայն սովորաբար կարևոր են երիտասարդական աշխատանքի համար:

«SALTO»-ն ստեղծել է Դասընթացների/վերապատրաստման եվրոպական ռազմավարության հմտությունների մոդել՝ երիտասարդական աշխատողների՝ միջազգային աշխատանքի համար (European Training Strategy Competence Model for Youth Workers to Work Internationally): Այն սահմանում է հմտությունները որպես գիտելիքների, արժեքների, մոտեցումների, կարողությունների և գործողությունների/վարքագծերի համախումբ: Մոդելը սահմանում է երիտասարդական աշխատողների ութ հմտություններ: Դրանք են՝

[7] Երիտասարդական աշխատողների կրթությունը Եվրոպայում: Քաղաքականություններ, կառույցներ, պրակտիկաներ, էջ 171

1. Անհատական և խմբային ուսումնառության ֆասիլիտացում հարստացնող միջավայրում,
2. Ծրագրերի մշակում,
3. Ռեսուրսների համակարգում և կառավարում,
4. Բարեհաջող թիմային համագործակցություն,
5. Այլոց հետ բովանդակալից հաղորդակցություն,
6. Միջմշակութային իրազեկության դրսևորում,
7. Նեթվորքինգ և ջատագովություն,
8. Գնահատողական պրակտիկաների ձևավորում՝ համապատասխան փոփոխությունները գնահատելու և իրականացնելու համար[8]:

Երիտասարդական աշխատողների կրթական ծրագրեր

Երիտասարդական աշխատանքի զարգացումը տարիներ շարունակ Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական Միության (ԵՄ) համար ընդհանուր հետաքրքրության առարկա է եղել: ԵՄ-ն աջակցող դեր է խաղում հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ԵՄ-ի տարածքում շարժունակությանը և հնարավորություններին: Երիտասարդական աշխատանքի եվրոպական 2-րդ կոնվենցիայի և Եվրոպայի Խորհրդի՝ Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ առաջարկության (CM/Rec(2017)4) ընդունումից հետո Եվրոպայում երիտասարդական աշխատանքի զարգացման ընդհանուր համատեքստում երիտասարդական աշխատողների կրթությունն ու վերապատրաստումը դարձան կարևոր նպատակ: Երիտասարդական աշխատանքի 3-րդ կոնվենցիայի հռչակագիրը (Declaration of 3rd European Youth Work Convention) պարունակում էր Երիտասարդական աշխատանքի հետազոտական օրակարգ մշակելու կոչ: Տվյալ օրակարգը, ի թիվս այլ թեմաների, պետք է ընդգրկեր «հետազոտություններ երիտասարդական աշխատողների կրթության ու վերապատրաստման համաձայնեցված ընդհանուր մասնագիտական ստանդարտների վերաբերյալ (օր.՝ հմտությունների մոդելներ և շրջանակներ, էթիկայի վարքականոններ, կրթակարգ/ուսումնական ծրագիր)»[9]: [ԵՄ] Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած՝ երիտասարդական աշխատողների կրթության ու վերապատրաստման թեմայով Խորհրդի նիստի եզրակացություններում, որոնք հրապարակվել են Եվրոպական Միության Խորհրդի կողմից 2019 թ.-ին, անդամ պետություններին առաջարկվում էր. «Ստեղծել երիտասարդական աշխատանքի գծով ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ու վերապատրաստման հմտությունների վրա հիմնված շրջանակ, որը հաշվի կառնի աշխատանք ունեցող/վճարվող երիտասարդական աշխատողների, երիտասարդական աշխատանքով մասնագիտորեն զբաղվել ցանկացողների, կամավոր երիտասարդական աշխատողների և երիտասարդական առաջնորդների

[8] Նույն տեղում (IBID), էջ 12
[9] Երիտասարդական աշխատանքի 3-րդ եվրոպական կոնվենցիայի հռչակագիր, էջ 13

վերապատրաստման/ուսումնական կարիքների տարբերությունները, որը կապավինի սովորողների փոխուսուցմանը (peer-learning) և կկիրառի թվային ուսուցման և այլ նորարական մեթոդներ»: Անդամ պետություններին նաև խրախուսում էին իրականացնել երիտասարդական աշխատանքի համար պահանջվող հմտությունների քարտեզագրում՝ հաշվի առնելով համապատասխան երկրի առանձնահատկությունները[10]:

Երիտասարդական աշխատանքի ասպարեզում կան զանազան բուհական և հետբուհական (ասպիրանտական) դասընթացներ: Երիտասարդական աշխատողներին տրամադրվող կրթությունն ու վերապատրաստումը կարելի է սահմանել և բնորոշել երեք համատեքստերում.

- Պետական աջակցությամբ գործող մարմինների կամ հաստատությունների կողմից տրամադրվող,
- Կամավոր հիմունքներով գործող երիտասարդական սեկտորի կողմից տրամադրվող,
- Եվրոպական աջակցության ծրագրերով տրամադրվող:

Ոչ ֆորմալ կրթության ու դասընթացների/վերապատրաստումների մեջ կիրառվող միջավայրային գործոնները, մեթոդները և գործիքները, կենտրոնական թեմաները և զարգացվող հմտությունները ընդգրկուն են և բազմաբնույթ: Միջավայրային գործոնները, մեթոդները և կիրառվող գործիքները ներառում են դասընթացներ, սեմինարներ, ծրագրեր, փոխանակումներ, փոխուսուցում, խմբային աշխատանք, ցանցեր, լավագույն փորձի փոխանակում և համաժողովներ: Արծարծվող թեմաները ոչ պակաս ընդգրկուն ու բազմազան են և ներառում են հետևյալը՝ մարդու իրավունքներ, սոցիալական ներառում, միջմշակութային իրազեկություն, հաղորդակցություն, տեղեկատվական ոլորտ, խորհրդատվություն, մասնակցություն և ջատագովություն, ինչպես նաև կոնֆլիկտների կառավարում, միգրացիա, ռադիկալացում, ապահովություն և պաշտպանություն, թմրամիջոցների [տարածման] կանխարգելում և գործազրկություն: Նման վերապատրաստումները հիմնականում միտված են զարգացնել անձնային, միջանձնային կամ թիմային հմտությունները, ներառյալ՝ առաջնորդությունը, ապրումակցումը, հաղորդակցական և միջմշակութային կարողությունները, ինչպես նաև կազմակերպական և կառավարչական կարողությունները[11]:

[10] Երիտասարդական աշխատողների կրթության և վերապատրաստման՝ հմտությունների շրջանակները և հմտահեն մոտեցումները հինգ եվրոպական երկրներում, էջ 10
[11] Երիտասարդական աշխատողների կրթությունը Եվրոպայում. Քաղաքականություններ, կառույցներ, պրակտիկաներ, Երիտասարդության մասին գիտելիքների գիրք 26, Եվրոպայի Խորհուրդ և Եվրոպական Հանձնաժողով, 2020 թ. ապրիլ

Երիտասարդական աշխատանքի մասնագիտացում[12] ապահովողները (երիտասարդական աշխատողների կրթական և մասնագիտական ստանդարտները և վավերացումը), պետք է իրականացնեն երիտասարդական աշխատանք իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը ու երիտասարդների կողմից երիտասարդական աշխատանքին առնչվող ոչ ֆորմալ ծրագրերի շնորհիվ ձեռք բերված կարողությունների ճանաչումը. Որակի ապահովման ստանդարտների մշակումն ու իրականացումը տարբեր է տարբեր երկրներում՝ սկսած ազգային մասնագիտական և կրթական ստանդարտներից մինչև երիտասարդական կազմակերպությունների գնահատում: Երիտասարդական աշխատանքի ստանդարտների սահմանումը առանցքային դեր է խաղում ոչ միայն մասնագիտության ճանաչման և կայացման, այլև երիտասարդական աշխատանքի որակի բարելավման համար[13]:

Հայաստանը երիտասարդական աշխատանքի համար պետք է մշակի որակի ապահովման շրջանակ, որը հիմք կծառայի երիտասարդական աշխատողների կրթական ծրագրի համար:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021-2026 թթ. ծրագրում կարևորում է երիտասարդության ոլորտը՝ ընդգծելով, որ ոլորտային քաղաքականության առաջնահերթությունները հասցեագրելու և մարտահրավերներին դիմակայելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել իրավական միջավայր և ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ՝ երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար: Ըստ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ նախատեսվում է մինչև 2026 թ. մարզերում հիմնել 25 երիտասարդական կենտրոն, որոնց նպատակն է երիտասարդների համար ստեղծել մի միջավայր, որը խթանում է նրանց ներուժի բացահայտումը, համակողմանի զարգացումը և ինտելեկտուալ-ժամանցային գործունեությանը:

[12] Մասնագիտացումը վերաբերում է այն գործընթացին, որի միջոցով գործունեության որոշակի ոլորտի ներկայացուցիչներ կարողանում են հանրությանը վստահեցնել, որ տվյալ ոլորտում որակյալ աշխատանք է կատարվում, և կատարվող աշխատանքի նկատմամբ մասնագիտական վերահսկողություն է իրականացվում: Արդյունքում տվյալ ոլորտը ձեռք է բերում հանրային ճանաչում և ֆինանսական աջակցություն պետական բյուջեից: Մասնագիտության հիմնական տարրերն են այն ոլորտի օրենսդրությունը, որը պետք է կապված լինի ֆինանսավորման հետ, այլ ոլորտներից անկախ կարգավիճակը, ոլորտային կրթությունը, ոլորտի հանրային ճանաչումը՝ որպես հանրօգուտ ոլորտ, ինքնավարությունը և ոլորտային հարցերում հանրության վրա ազդեցություն գործելու ուղիները: Երիտասարդական աշխատանքում մասնագիտացումը ընկալվում է որպես երիտասարդական աշխատանքի ֆինանսավորում երաշխավորելու միջոց, սակայն միաժամանակ կա մտավախություն, որ երիտասարդական աշխատանքի կամավորական և քաղաքացիական հասարակության ուղղվածությամբ ձևերը կարող են անտեսվել:

[13] Երևելյան Եվրոպայում երիտասարդական աշխատանքի մասին տարածաշրջանային տեսանկյուններ, էջ 13

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2022 թ.-ին հրապարակված «Երիտասարդական միջավայրի» գործունեության ուղեցույցի՝ երիտասարդական կենտրոնների թիրախային խումբը ներառում է 14-30 տարեկան անխտիր բոլոր երիտասարդներին, որոնք բնակվում են համապատասխան համայնքում[14]:

Հայաստանում արդեն իսկ հիմնվել են ութ երիտասարդական կենտրոններ, որոնք տեղակայված են Դիլիջանում, Իջևանում, Ապարանում, Կապանում, Մեղրիում, Արարատում, Ախուրյանում և Սևանում: Այս երիտասարդական կենտրոնները պարտավոր են իրականացնել մասնագիտական երիտասարդական աշխատանք, որը կենտրոնացած է այն երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներգրավվածության և ակտիվ քաղաքացիության ձևավորման վրա, որոնք չունեն աշխատանք և չեն ստանում ֆորմալ կրթություն: Կենտրոնների նպատակն է նպաստել երիտասարդների կարողությունների բացահայտմանը, բավարարել նրանց կրթական, մշակութային և սոցիալական հետաքրքրությունները և հասցեագրել երիտասարդությանն առնչվող զանազան խնդիրներ: Երիտասարդական կենտրոնը պետք է ապահովի, որպեսզի տվյալ համայնքում բնակվող բոլոր երիտասարդներն ունենան հասանելիություն կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններին: Այնուհանդերձ, դեռևս չեն մշակվել երիտասարդական կենտրոնների մշտադիտարկման և որակի ապահովման ընթացակարգեր: Երիտասարդության ոլորտի փորձագետները շեշտում են երիտասարդական կենտրոնների մշտադիտարկման և որակի ապահովման առանցքային կարևորությունը: Փորձագետները նաև առաջարկել են կիրառել «որակի նշան» մոտեցումը որպես այս կենտրոնների համար որակի ապահովման հնարավոր գործիք:

Մնացած 17 երիտասարդական կենտրոնների ժամանակին հիմնադրման համար կարևոր է ապահովել իրատեսական պլանավորում, մշտադիտարկում և գնահատում: 17 երիտասարդական կենտրոն պետք է հիմնվի 2025 և 2026 թթ.: Ըստ այդմ, անհրաժեշտ է ավելի արդյունավետ պլանավորում:

Երիտասարդության հարցերով կառավարման կոմիտեն (European Steering Committee for Youth) մշակել է մի ծրագիր, որի շրջանակում պետք է խթանվի Եվրոպայի Խորհրդի Եվրոպական երիտասարդական կենտրոնների մոդելը, քանի որ վերջիններս հանդիսանում են ստանդարտներ ձևավորող գործիքներ և երիտասարդական քաղաքականությունների լավ փորձի օրինակներ: Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն հաստատել է այդ նախաձեռնությունը նախնական շրջանում որպես եռամյա պիլոտային ծրագիր, որը մեկնարկել է 2010 թ.-ին: Այս ծրագրի նպատակն է Եվրոպայի երիտասարդական կենտրոնների միջև գիտելիքների փոխանակումը և նեթվորքինգը: Այն կազմված է երեք հիմնական տարրերից.

1. Եվրոպայի Խորհրդի որակի նշան երիտասարդական կենտրոնների համար, որը շնորհվում է այն երիտասարդական կենտրոններին, որոնք համապատասխանում են սահմանված որակի չափանիշներին,

[14] «Երիտասարդական միջավայրի» գործունեության ուղեցույց, https://escs.am/am/news/15476

2. երիտասարդական կենտրոնների եվրոպական հարթակի ամենամյա ժողով՝ որակի նշանով ճանաչված և նշանի ձեռքբերմանը հավակնող երիտասարդական կենտրոնների միջև նետվորքինգ ապահովելու նպատակով,
3. ամենամյա վերապատրաստման դասընթաց երիտասարդական կենտրոնների՝ կրթական գծով անձնակազմի համար:

Եվրոպական երիտասարդական հիմնադրամը (ԵԵՀ) նույնպես խրախուսում է որակի նշանով օժտված երիտասարդական կենտրոնների ներուժի օգտագործումը՝ ԵԵՀ-ի աջակցությամբ գործունեություն կազմակերպելու համատեքստում: Այլ կերպ ասած, որակի նշանը ֆինանսական ռեսուրսների հատկացման գործիք է: Հավակնորդ կենտրոնները և պետական մարմինները, որոնք ցանկանում են երիտասարդական կենտրոն ձևավորել, կարող են օգտագործել որակի նշանի ձեռքբերումը՝ իբրև ուղեցույց՝ իրենց կենտրոնը Եվրոպայի Խորհրդի ստանդարտների համաձայն հիմելու համար: Որպես աջակցություն՝ Եվրոպայի Խորհուրդը կարող է հավակնորդ կենտրոնին տրամադրել իր փորձագիտական ներդրումը երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի հայեցակարգային (կոնցեպտուալ) ու գործնական զարգացման առնչությամբ, ինչպես նաև կոնկրետ խորհուրդներ տալ այն երիտասարդական կենտրոնների ենթակառուցվածքային, կազմակերպչական, վարչական և կրթական որակի վերաբերյալ, որոնց հիմական առաքելությունը երիտասարդների արժեքավոր կրթությունն է:

Հայաստանում երիտասարդական կենտրոնները ֆինանսական ռեսուրսներ են ստանում հնգամյա դրամաշնորհների տեսքով: Մշտադիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա ռեսուրսների վերաբաշխման ընթացակարգ գոյություն չունի: «Հայաստանի Հանրապետության երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման և զարգացման գործընթացը երիտասարդական ոլորտի բարեփոխման հիմնաքարային ուղղություններից է, որով կարգավորվում են ոլորտի շահառուների լիազորությունները և համապատասխան սուբյեկտների իրավահարաբերությունները: «Հայաստանի Հանրապետության երիտասարդական քաղաքականության մասին» օրինագծի մշակման նպատակով Նախարարությունը նախաձեռնել է մասնակցային գործընթաց, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թ. նոյեմբերի 6-ի No. 1419-Ա հրամանի հիման վրա օրինագծի մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը կազմված էր պետական ոլորտի, քաղհասարակության կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից: Քաղհասարակության կազմակերպությունների անդամները աշխատանքային խմբում ընդգրկվել են՝ հաշվի առնելով նրանց ոլորտային դերերը: Աշխատանքային խումբը գործել է երեք ենթախմբերում, որոնք համակարգվել են աշխատանքային խմբի անդամների կողմից՝ ըստ նրանց ոլորտային դերերի: Աշխատանքային խմբերը կազմված են միայն ՔՀԿ ներկայացուցիչներից: Արդյունքում, օրինագծի մշակման աշխատանքներում մասնակցել է մոտ 45 ներկայացուցիչ պետական մարմիններից, քաղաքացիական հասարակությունից և միջազգային կազմակերպություններից: Օրինագծի մշակմանը մասնակցել են նաև

երիտասարդական և իրավական ոլորտների հրավիրյալ փորձագետներ: Օրինագծի մշակմանն օժանդակել են բազում միջազգային գործընկերներ: Մասնավորապես՝ բալթյան երկրների, մասնավորապես՝ Լատվիայի և Լիտվայի երիտասարդական քաղաքականությունների ուսումնասիրությանը, երիտասարդական և իրավական ոլորտների փորձագետների ներգրավմանը, Հայաստանի մարզերում քննարկումների անցկացմանը և օրինագծի մշակմանը աջակցել են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) հայաստանյան ներկայացուցչությունը, «Երիտասարդների ներգրավում և զորեղացում. Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության ամրապնդում» ծրագիրը, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից «ԵՄ-ն հանուն երիտասարդների» ծրագրի 4-րդ ցիկլի շրջանակում, ինչպես նաև «Երիտասարդական քաղաքականությունների մշակումը գործնականում. Երիտասարդական քաղաքականության կարողությունների զարգացման ամրապնդում» ծրագիրը, որն իրականացվում է ԵՄ-ԵԽ երիտասարդության հարցերով գործընկեության շրջանակում: Օրինագիծն առաջին ընթերցմամբ քննարկվել է Ազգային ժողովի խորհրդարանական լսումների ժամանակ՝ 2024 թ. դեկտեմբերի 17-ին և 2025 թ. հունվարի 21-ին: Համաձայնագրի իրականացման համար ձեռնարկված միջոցառումների շրջանակում նաև օրինագծի մշակման գործընթացին աջակցելու ուղղությամբ են քայլեր ձեռնարկվել: Օրենքի կենտրոնական տարրերն են երիտասարդական աշխատանքը և երիտասարդական աշխատողները: Ազգային Ժողովը մարտի 6-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության Երիտասարդական քաղաքականություն մասին» օրենքը: Մենք կարող ենք եզրակացնել, որ օրենքը մշակվել է ՀԸԳՀ-ում ամրագրված մոտեցումների հիման վրա: Օրենքն ընդգրկում է երիտասարդական քաղաքականությունների սկզբունքները. դրանք են՝ մասնակցայնությունը, փաստահեն քաղաքականությունը, չափելի ներգրավումը, երիտասարդությունը որպես ռեսուրս: Այնուամենայնիվ օրենքի հիմնավորումից բացակայում է ՀԸԳՀ-ի վերաբերյալ փաստարկը[15]:

Հայաստանի՝ երիտասարդական քաղաքականության իրավական շրջանակ մշակելու և երիտասարդական կենտրոններ հիմնելու հանձնառությունը դրվատելի է, սակայն կան լուրջ մարտահրավերներ, որոնք պետք է հասցեագրել՝ այս նախաձեռնությունների կայունությունը և արդյունավետությունն ապահովելու համար: Գոյություն ունեն հետևյալ մարտահրավերները.

Երիտասարդական քաղաքականության մասին օրենքը արդյունավետ երիտասարդական քաղաքականության համար անհրաժեշտ, սակայն ոչ բավարար հիմք է: Կարևոր է մշակել երիտասարդական ռազմավարություն՝ որակյալ երիտասարդական քաղաքականության 8 ստանդարտների հիման վրա[16]:

[15] http://www.parliament.am/draft_docs8/K-962_Himnavorum.pdf
[16] https://tools.youthforum.org/8-standards/

Մշտադիտարկման և գնահատման համակարգի բացակայությունը երիտասարդական քաղաքականությունից: Մշտադիտարկման և գնահատման կուռ շրջանակը կարող է երիտասարդական կենտրոնների ազդեցությունը գնահատելու հնարավորություն ընձեռել և համապատասխանաբար, դրանց՝ ըստ կատարողականի ֆինանսավորման հիմք ստեղծել:

Երիտասարդական կենտրոնների որակի գնահատման մեթոդաբանության բացակայություն: Պետք է որդեգրել երիտասարդական կենտրոններին որակի նշան շնորհելու ուղին: Սա կամրագրի որակի ապահովման հստակ շրջանակ և կխրախուսի շարունակական բարելավումները:

Փոխանակումների և կարողությունների զարգացման ծրագրերը հատվածական են: Ավելի արդյունավետ կլինի կայուն գործընկերային կապեր հաստատել երիտասարդական կենտրոնների և միջազգային ցանցերի միջև: Հայաստանն ավելի մեծ օգուտ կարող է քաղել երիտասարդական քաղաքականություններով զբաղվող ցանցերի հետ սերտ գործակցությունից, ինչը կտա գիտելիքներով փոխանակվելու, կարողությունները զարգացնելու հնարավորություն և միջազգային փորձի հասանելիություն:

ՀԸԳՀ միջոցառումների փուլային իրականացման տրամաբանությունը: Համաձայնագրի ճանապարհային քարտեզը պետք է զգալի փոփոխությունների ենթարկվի, և պետք է ներդրվեն երիտասարդական ոլորտի քանակական և որակական փոփոխությունների գնահատման ցուցիչներ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2022 թ.-ին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մշակել և ընդունել է Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույց[17]: Ուղեցույցում սահմանված են երիտասարդական աշխատանքի նպատակը, վերապատրաստման ծրագրի կառուցվածքը, հիմնական թեմաները, մեթոդաբանությունները, իրականացման փուլերը, էթիկայի նորմերը և թե՛ դասընթացավարների, թե՛ մասնակիցների ընտրության չափանիշները: Ամեն տարի 25 երիտասարդական աշխատողներ վերապատրաստում են անցնում: Երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել ԵԽ-ի պորտֆելը: Երիտասարդական աշխատողների հմտությունները ներառում են մասնագիտական կարողությունները, անձնային որակները և էթիկայի նորմերը[18]: Մասնագիտական կարողություններն ընդգրկում են.

- երիտասարդական պետական քաղաքականության իրազեկվածությունը

[17] https://escs.am/files/files/2023-03-07/72fa538a5aba35a5492e1204f1505cb7.pdf
[18] Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույց, էջ 9-10

- երիտասարդների հետ աշխատելու գիտելիքներն ու փորձը և այդ գիտելիքներն ի նպաստ ոլորտի զարգացմանը ծառայեցնելու հմտությունը
- ձեռք բերված գիտելիքներն ի նպաստ երիտասարդական աշխատանքի կիրառելու հմտությունը
- ծրագրերի մշակման և իրականացման հմտությունները
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման բազային հմտությունները
- ղեկավարման հմտությունները
- գնահատման և մշտադիտարկման իրականացման հմտությունները
- դասավանդման հմտությունները:

Կրթական ծրագրերի բովանդակությունը

Ըստ Ուղեցույցի՝ երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացի թեմաները հետևյալն են.

1. Աշխատանք երիտասարդների հետ, երիտասարդներ և երիտասարդական աշխատողներ
2. Երիտասարդական աշխատանքի զարգացում, երիտասարդական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ, մասնագիտական էթիկա, երիտասարդական քաղաքականություն և ծրագրեր
3. Երիտասարդական աշխատողը՝ որպես թիմի անդամ, հաղորդակցման ոճերը, միջմասնագիտական հաղորդակցություն
4. Անձի ճանաչման և զարգացման փուլեր, մոտիվացիա. երիտասարդության տարիք
5. Երիտասարդների սոցիալական հիմնախնդիրները
6. Ուսումնառության տեսակները. ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն
7. Ղեկավարման հմտություններ, առաջնորդության զարգացում, մասնագիտական կողմնորոշում
8. Կոնֆլիկտների հաղթահարում. ներանձնային և միջանձնային կոնֆլիկտներ
9. Սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների հետ աշխատանքի հմտություններ
10. Երիտասարդների ինքնակազմակերպմանն ու համախմբմանն ուղղված աջակցություն և խրախուսում
11. Երիտասարդների՝ հանրային կյանքին մասնակցության խթանման գործիքակազմ և մեթոդներ
12. Ֆոնդհայթայթում
13. Ծրագրերի մշակում, իրականացում, մշտադիտարկում և գնահատում
14. Երիտասարդական միջազգային համագործակցության ծրագրեր

Դասընթացը բաղկացած է 64 ժամ դեմառդեմ ուսումնառությունից և 148 ժամ ինքնուրույն աշխատանքից ու մենթորությունից: Փորձագետները նշում էին, որ այս դասընթացն արդյունավետ է փորձառու երիտասարդական աշխատողների համար:

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ երիտասարդական աշխատողների վերապատրաստման դասընթացում հետևյալ թեմաներն ավելի լավ հասցեագրելու կարիք կա՝ անձի ճանաչում, հուզական ինտելեկտ, հաղորդակցություն, ներառյալ՝ անգլերենով, կողմնորոշման կարողություններ, միջազգային փոխանակման ծրագրեր, հոգեկան առողջություն, երիտասարդների կարիքներ, համայնքային կարիքների ուսումնասիրություն, կրթությունից, վերապատրաստումներից և աշխատաշուկայից դուրս մնացած խմբի երիտասարդության (NEET youth) հետ աշխատանք, շարժուն (մոբիլ) երիտասարդական աշխատանք, խաղայնացման մոտեցումներ և գործիքներ, մասնակցության գործիքներ, արհեստական բանականությունը և երիտասարդները:

Կարևոր է նաև նշել, որ երիտասարդական աշխատանքի վերաբերյալ վերապատրաստման դասընթացի մոդուլները նպատակ ունեն զարգացնել երիտասարդական աշխատողների ընդհանուր հմտությունները, իսկ ավելի կոնկրետ հմտությունները պետք է ընդգրկվեն ավելի երկարաժամկետ կրթական ծրագրում: Ինչպես արդեն նշվեց, դասընթացի ծրագիրը մշակվել է ըստ ԵԽ-ի պորտֆելի տրամաբանության, սակայն երիտասարդական աշխատողները և փորձագետներն ընդգծում էին, որ Հայաստանում երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացն արդյունավետ է փորձառու երիտասարդական աշխատողների համար, բայց այն սկսնակ երիտասարդական աշխատողներին չի հրամցնում երիտասարդական աշխատանքի մասին ֆունդամենտալ գիտելիքներ:

Հայաստանի և ԵՄ-ի երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների փոխանակման և վերապատրաստման ծրագրեր

Ինչ վերաբերում է երիտասարդության ոլորտին առնչվող միջոցառումներին, հարկ է նշել, որ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 666-Լ որոշման Հավելված 2-ի՝ իրականացվել և իրականացվում են հետևյալ գործողությունները.

ՀԸԳՀ Հոդված 95 ա) (a) Հայաստանի և ԵՄ-ի երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների համար փոխանակումների ու վերապատրաստման ծրագրերի իրականացում :

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականություններ մշակողները և երիտասարդական աշխատողները մասնակցել են մի շարք միջոցառումների, որոնք կազմակերպվել են ԵՄ-ի կողմից երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների ունակությունների զարգացման և փորձի փոխանակման նպատակով.

- 5 վերապատրաստման ծրագրեր 2022 թ.-ին,
- 8 վերապատրաստման սեմինարներ, փորձի փոխանակման այցեր 2023 թ.-ին,
- 6 սեմինարներ, ուսումնական այցեր 2024 թ.-ին:

Այս փոխանակումները և վերապատրաստումները նպաստել են, որպեսզի փոխվի երիտասարդության մասին օրենքի մշակման շեշտադրումը: Նախքան այս այցերը այն անվանվում էր «Երիտասարդության մասին» օրենք, բայց հետագայում երիտասարդական քաղաքականություններ մշակողները վերանվանեցին այն «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենք: Երիտասարդական քաղաքականություններ մշակողները և երիտասարդական աշխատողները, որոնք մասնակցել են այս այցերին, հնարավորություն են ունեցել գիտելիքներ ձեռք բերել ու պատկերացում կազմել մասնակցության գործիքների, մասնակցային մոտեցումների, համայնքային երիտասարդական աշխատանքի և տարբեր տարիքային խմբերի երիտասարդների հետ աշխատանքի մասին: Փորձագետները նշել են, որ այս այցերը և վերապատրաստումները կարող էին ավելի արդյունավետ լինել և ավելի մեծ ազդեցություն ունենալ հայ երիտասարդության վրա, եթե նախապես ուսումնական ծրագիր կազմվեր: Ուսումնական ծրագիրը պետք է ներառի առանցքային հարցեր, որոնք այցի ընթացքում կուղղորդեն մասնակիցների կողմից տեղեկատվության և գիտելիքների որոնումները:

Երիտասարդական աշխատողների համար արդյունավետ էր ծանոթանալ երիտասարդների հավաքագրման և ներգրավման փորձին և տեղեկանալ, թե ինչպես ներգրավել վերջիններիս երիտասարդական կենտրոններում: Այս փորձը կիրառվել է Դիլիջանի երիտասարդական կենտրոնում և ներառել է այցելություն դպրոց ու նախնական աշխատանք երիտասարդների հետ:

Մենք կարող ենք եզրակացնել, որ հոդվածով նախատեսված միջոցառումներն իրականացվել են: Այնուհանդերձ, քանի որ չկան պլանավորված միջոցառումների գնահատման հստակ և չափելի ցուցիչներ, դժվար է գնահատել հոդվածի իրականացման որակը:

ՀԸԳՀ Հոդված 95 գ) (c) ԵՄ անդամ պետությունների երիտասարդական կենտրոններում փորձնակության կազմակերպում այն երիտասարդների համար, որոնք Հայաստանում մասնակցել և հաջողությամբ ավարտել են երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացը:

2021-2024 թթ. երիտասարդները, երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական աշխատողները Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքի, erit.am երիտասարդական հարթակի, սոցիալական ցանցերի, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններին ուղարկվող շրջաբերականների միջոցով լայնորեն իրազեկվել են ԵՄ-ում երիտասարդների համար կազմակերպվող կարողությունների զարգացման տարատեսակ հնարավորությունների մասին:

2024 թ.-ին փոփոխություններ են կատարվել երիտասարդներին ավիատոմսեր տրամադրելու ընթացակարգում՝ այն ազգային երիտասարդական քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Այս փոփոխությունները միտված են հատկացված ֆինանսական ռեսուրսներն ուղղել երիտասարդների և երիտասարդական խմբերի՝ միջազգային երիտասարդական հարթակներին, հատկապես՝ երիտասարդական միջոցառումներին ու ծրագրերին մասնակցության մակարդակի բարձրացմանը՝ միաժամանակ խրախուսելով նրանց առավել ակտիվ ներգրավվածությունը:

ՀՀ կառավարության 2021 թ. նոյեմբերի 18-ի No. 1902-Լ որոշմամբ հաստատված 2021-2026 թթ. գործողությունների ծրագիրը ներառում է հետևյալ միջոցառումը. «Աջակցություն հայ երիտասարդության և երիտասարդական պատվիրակությունների մասնակցությանը միջազգային փառատոներին, համաժողովներին, մրցույթներին, ֆորումներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին»: Այս միջոցառման շրջանակում միջազգային երիտասարդական միջոցառումների, ֆորումների և համաժողովների մասնակցելու հնարավորություն են ստացել՝ 2022 թ.-ին 15 երիտասարդ, 2023 թ.-ին 18 երիտասարդ և 2024 թ.-ին 21 երիտասարդ: Որոշ դեպքերում տրամադրվում է նաև ֆինանսական աջակցություն, մասնավորապես՝ ավիատոմսերի արժեքի փոխհատուցման տեսքով:

2024 թ.-ին փոփոխություններ են կատարվել երիտասարդներին ավիատոմսեր տրամադրելու ընթացակարգում՝ այն ազգային երիտասարդական քաղաքականության տրամաբանությանը համապատասխանեցնելու նպատակով: Հատկացված ֆինանսական ռեսուրսներն ուղղվում են նաև երիտասարդների և երիտասարդական խմբերի՝ միջազգային երիտասարդական հարթակներում, հատկապես՝ երիտասարդական միջոցառումներում ու ծրագրերում ներգրավվածության աճին, և միաժամանակ խրախուսվում է նրանց առավել ակտիվ մասնակցությունը:

Երիտասարդական աշխատողը մասնակցել է միջազգային փոխանակման ծրագրի, գիտելիքներ ու կարողություններ է ձեռք բերել համայնքային համայնքային երիտասարդական աշխատանքի մասին: Եվրոպական երիտասարդական մայրաքաղաք կատարած այցի արդյունքում երիտասարդական աշխատողը կարողացավ

մոբիլիզացնել համայնքին, և 2025 թ.-ին այն դարձավ Հայաստանի երիտասարդական մայրաքաղաքը:

2024 թ. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած այցի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ՝ երիտասարդական աշխատողներին ԵՄ-ի որակի նշանն ունեցող երիտասարդական կենտրոնների աշխատանքին ծանոթացնելու, փոխանակման ծրագրեր կազմակերպելու և Գերմանիայի երիտասարդական կենտրոններում երիտասարդական աշխատողների համար համատեղ վերապատրաստման դասընթացներ անցկացնելու հնարավորության մասին:

Այս հոդվածն ամբողջությամբ չի իրականացվել, քանի որ նախարարությունը երիտասարդական աշխատողի այցի վերաբերյալ բանակցություններն սկսել է 2024 թ.-ին, սակայն այն դեռևս տեղի չի ունեցել:

Վերապատրաստման իրականացում, ֆինանսավորում, դասընթացավարների կարողություններ, որակի ապահովում

Ինչպես արդեն նշվեց, վերապատրաստման ծրագրին մասնակցելու համար ամեն տարի ընտրվում է 25 երիտասարդական աշխատող:

Թեպետ երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագիրը Նախարարության կողմից ուղղակիորեն որպես ՀԸԳՀ միջոցառում չի ներկայացվում, երիտասարդական աշխատողների և երիտասարդական քաղաքականություններ մշակողների կարողությունների զարգացմանն ուղված փոխանակման ծրագրերը, որոնք ՀԸԳՀ միջոցառումներ են, ազդեցություն ունեն այս դասընթացների վրա: Երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացը ֆինանսավորվում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից դրամաշնորհային ծրագրով: Դասընթացն անցկացվում է 2024 թ.-ի Երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացի կազմակերպման համար հայտարարված մրցույթի հաղթող կազմակերպության՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ UNICEF-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

Ընդհանուր առմամբ դասընթացը բաղկացած է 3 փուլից:

1. Առաջին փուլը տևում է 4 օր և կազմված է առկա դասերից և ինքնուրույն/անկախ աշխատանքից:
2. Երկրորդ փուլը տևում է 4 օր և կազմված է առկա դասերից և ինքնուրույն աշխատանքից:
3. Երրորդ փուլը տևում է 3 օր և կազմված է առկա դասերից և ինքնուրույն աշխատանքից

Մասնակիցների ընտրության հետևյալ չափանիշներն են գործում՝ բարձրագույն կրթություն, երիտասարդական ոլորտում առնվազն 1 (ցանկալի է 3) տարվա փորձ և կամավորության փորձ: Մասնակիցների ընտրությունը կատարվում է բաց կանչի միջոցով:

Դասընթացավարների ընտրության չափանիշները հետևյալն են.

- երիտասարդական աշխատանքի առնվազն 3 (ցանկալի է 5) տարվա փորձ
- ՀՀ երիտասարդական ոլորտի իրազեկություն
- բարձրագույն կրթություն
- ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության հիմնական մոտեցումների և գործիքների տիրապետում
- ոչ ֆորմալ կրթության ծրագրերի ուսուցողական թիմերում ներգրավվածության 3 տարվա փորձառություն
- վերապատրաստման ծրագրում նշված թեմաներով առնվազն 5 վերապատրաստման դասընթացի իրականացման փորձ
- տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն
- գրագետ բանավոր և գրավոր խոսք / հաղորդակցական կարողություններ, արդյունքների համապարփակ ներկայացման ունակություն
- ռազմավարական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն:

Դասընթացը գնահատվում է թե՛ մասնակիցների, թե՛ դասընթացավարների կողմից առցանց հարցաթերթիկի միջոցով վերապատրաստման տարբեր փուլերում և դասընթացի ավարտին: Դրա հիման վրա կատարվել են մեթոդաբանական ոչ էական փոփոխություններ:

Դասընթացի արդյունավետությունը, երիտասարդների կարիքները

Հետքովիդյան և հետպատերազմյան իրավիճակը Հայաստանում կարելի է բնորոշել որպես շարունակական ճգնաժամ: Հակամարտությունների ազդակիր հասարակություններում հաճախ նկատվում է հիմնաքարային արժեքների վերարժևորում, ավելի մեծ անհատական ազատության զգացողություն, ավելի բարձր անհատական պատասխանատվություն ավելի փոքր համայնքների նկատմամբ, ավելի բարձր քննադատական մտածողություն, ժողովրդագրական փոփոխություններ, գործազրկություն, առողջական խնդիրներ և երիտասարդների շրջանում՝ առանձնանալու և ավելի մեծահասակ բնակչությունից անջատվելու միտում: Ուստի նման ճգնաժամերի ժամանակ զանազան երիտասարդական խմբերի ներգրավումը որոշումների կայացման գործընթացում դառնում է բարդ և բազմաշերտ գործընթաց՝ ընդգծելով երիտասարդների մասնակցության կարևորությունը՝ նրանց տեսանկյունները քաղաքականությունների ձևակերպման և որոշումների կայացման գործընթացներում ինտեգրելու առումով: Հետպատերազմյան համատեքստում պետական կառույցների հանդեպ վստահության ճգնաժամը հանգեցրել է պետության և նրա կառույցների նկատմամբ անվստահության՝ երիտասարդների շրջանում

առաջացնելով մեկուսացման (օտարվածության) զգացում[19]: Այս տեսանկյունից կարևոր են դառնում այն մասնագետների գիտելիքները և կարողությունները, որոնք պետք է աշխատեն այս երիտասարդների հետ:

Դեռևս պատերազմից առաջ հայաստանյան երիտասարդությունը բախվում էր մի շարք մարտահրավերների, ներառյալ՝ գործազրկությունը, առողջական խնդիրները և կրթության որակին առնչվող հարցերը: Այնուհանդերձ, հետպատերազմյան շրջանում այս մարտահրավերները խորացել են, և ծագել են նոր խնդիրներ, ինչպիսիք են հետպատերազմական իրականության անորոշությունը, նոր պատերազմի կայուն սպառնալիքը, հոգեկան առողջության խնդիրները և կրթության իրավունքի լիարժեք իրացման հարցը: Այս գործոնները ստիպում են երիտասարդներին շարունակաբար հարմարվել նոր իրողությունների և շարունակական անորոշության: Համավարակը և պատերազմը զգալիորեն ազդել են երեխաների ու երիտասարդների՝ կրթության մեջ ներգրավվածության վրա, քանի որ հեռահար ուսուցման անցումը համավարակի, պատերազմական գործողությունների և անվտանգային մտահոգությունների արդյունքում խաթարել է նրանց կրթության իրավունքի լիարժեք իրացումը[20]:

Ներկայումս հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների առջև ծառացած են բազում խնդիրներ, այդ թվում՝

- վստահության ճգնաժամ. ապագայի հանդեպ վստահության անկում, համայնքից, կառավարությունից և պետական կառույցներից հեռացածություն և մասնակցության ցածր մակարդակ,
- կրթական կարիքներ. մտահոգություններ կրթության որակի, ներառականության շուրջ, սահմանափակ ներգրավվածություն ոչ ֆորմալ կրթության ծրագրերում, ինչպես նաև համայնքային կրթական ծառայությունների բացակայություն,
- առողջությանն առնչվող կարիքներ. հոգեկան առողջության հետ կապված մարտահրավերներ, առողջ ապրելակերպի մշակույթի պակաս և վնասակար սովորությունների գերակայություն,
- ժամանակն ու տարածությունը ինքնակայացման, ինքնության ձևավորման համար օգտագործելու հնարավորությունների պակաս,
- աշխատաշուկայում լիարժեք ընդգրկվելու սահմանափակ հնարավորություններ[21]:

Հետպատերազմյան համատեքստում պետական կառույցների հանդեպ վստահության ճգնաժամը հանգեցրել է պետության և նրա կառույցների նկատմամբ անվստահության՝ երիտասարդների շրջանում առաջացնելով օտարվածության (մեկուսացման) զգացում: Արդյունքում արձանագրվել է հետևյալ պատկերը:

- Երիտասարդների գրեթե կեսը չի մասնակցել վերջին ընտրություններին:

[19] Գալստյան, 2023
[20] Գալստյան, 2021
[21] Գալստյան, 2023

- Երիտասարդների միայն մեկ-հինգերորդն է հետաքրքրված Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով:
- Երիտասարդների 9.6%-ն է անդամակցում որևէ քաղաքական կուսակցության կամ որևէ քաղաքական շարժման, և այս թիվը անփոփոխ է մնացել 2012 թ.-ից ի վեր[22]:
- Երիտասարդների միայն 5.4%-ն է անդամակցում որևէ հասարակական կազմակերպության[23]:
- Երիտասարդների փոքր մասն է մասնակցել քաղաքացիական շարժումների, բարեգործական միջոցառումների, ֆոնդհայթայթման գործունեության կամ կամավորական աշխատանքի վերջին վեց ամսում:
- Երիտասարդների 38%-ը նշել է, որ իրենց մոտ այն զգացողությունն է, որ իրենք համայնքային մակարդակում որոշում կայացնողների վրա ազդեցություն չունեն. թեև նրանք կցանկանային ունենալ նման ազդեցություն, դրա հնարավորությունը չեն տեսնում [24]:
- 18-20 տարեկան երիտասարդների 10%-ը ֆունկցիոնալ գրագիտության խնդիր ունի[25]:

Երիտասարդական աշխատանքը, որը կատարվում է ՀԿ-ների գործունեության շրջանակում և երիտասարդական կենտրոններում, գլխավորապես ակումբների և դասընթացների ձևաչափով է իրականացվում: Մշտադիտարկման մասնակից փորձագետները և մի առանցքային տեղեկատու նշել են, որ երիտասարդների առավելագույնը 6-7 տոկոսն է ներգրավված այս գործունեության մեջ: Երիտասարդական քաղաքականություններ մշակողները նշել են, որ պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական կենտրոնների գործողություններում/միջոցառումներում ներկայումս ներգրավված է 6000 երիտասարդ:

Երիտասարդական կենտրոններն ունեն ակումբներ, երիտասարդներին տարածք են տրամադրում, աջակցում են տնային աշխատանքի կատարման մեջ և մասնագիտական կողմնորոշման ծառայություն են մատուցում: Այնուամենայնիվ, երիտասարդական կենտրոնները դեռևս չեն հասցեագրում երիտասարդների մի շարք կարիքները: Քանի որ գոյություն չունի երիտասարդական կենտրոնների մշտադիտարկման և գնահատման համակարգ և մեխանիզմ, չկան կենտրոնների գործունեությանն առնչվող համապատասխան ցուցիչներ, ըստ որոնց ֆինանսական ռեսուրսները պետք է բաշխվեն. երիտասարդական քաղաքականություններ մշակողները չեն կարողանում մշտադիտարկել երիտասարդական կենտրոնների՝ բովանդակության մատուցումը:

[22] IBID, էջ 98
[23] IBID, էջ 102
[24] IBID, էջ 101
[25] 2018 թ. Համաշխարհային զարգացման զեկույց, https://documents1.worldbank.org/curated/en/099165002012328951/pdf/P1749800007e7703509aac0261edaee2ee6.pdf

ՀԸԳՀ-ի ազդեցությունը երիտասարդական ոլորտի վրա

ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների իրականացմանը և ազդեցությանը վերաբերող առկա իրավիճակը երկակի գնահատման հիմք է տալիս, քանի որ հստակորեն ձևակերպված չէ, թե մենք ինչ փոփոխության ենք ձգտում, և այդ փոփոխության հաստակ ցուցիչները սահմանված չեն: ՀԸԳՀ համապատասխան հոդվածի ա (a) և գ (c) կետերի արդյունքը կարողությունների զարգացումը և փորձի փոխանակումը, իրազեկությունը և լավ փորձն է: Մեթոդաբանական տեսանկյունից դժվար է երիտասարդական ոլորտի վրա ՀԸԳՀ-ի ազդեցությանը հստակ գնահատական տալ, քանի որ այս ազդեցության չափման հստակ ցուցիչներ չեն սահմանվել: Մենք կարող ենք հաստատել, որ որոշ գործողություններ իիրականացվել են՝ համաձայն ճանապարհային քարտեզում նախանշված միջոցառումների: Այնուհանդերձ, բարդ է գնահատել, թե որքանով են այս գործողությունները հանգեցրել երիտասարդական ոլորտում ցանկալի փոփոխություններին:

Մենք կարող ենք նշել, որ փոխանակման ծրագրերի արդյունքում երիտասարդական աշխատողները և երիտասարդական քաղաքականություններ մշակողները էականորեն զարգացրել են իրենց կարողությունները՝ կապված երիտասարդների մասնակցության և մասնակցության գործիքների հետ:

«Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման գործընթացը նույնպես կրում է փոխանակման ծրագրերի և ուսումնական այցերի ազդեցությունը, որոնք եվրոպական տարբեր երկրների երիտասարդական ոլորտի օրենսդրությանը ծանոթանալու հնարավորություն են ընձեռել մասնակիցներին:

Ներկայումս ճանապարհային քարտեզը ուսումնասիրվում է, և ոլորտային նախարարությունը հատուկ ցուցիչների սահմանմանն ուղղված առաջարկ է ներկայացրել: Սա կարևոր քայլ է, քանի որ նախարարությունը հասկանում է, որ ցուցիչները կարևոր են, սակայն որպեսզի ցուցիչները տեղեկատվական դեր խաղան մի քանի տարի անց, այս ցուցիչները պետք է թե՛ քանակական, թե՛ որակական հատկանիշներ ունենան: Նախարարությունն առաջարկել է որպես համապատասխան հոդվածի «ա» կետի միջոցառում ներառել ԵՄ-ի կողմից մշակված Գործիքների Տեղայնացումը՝ երիտասարդների մասնակցությունը զանազան ոլորտներում բարձրացնելու նպատակով:

ՀԸԳՀ-ի իրականացման համար ֆինանսական ռեսուրսներ են պահանջվում, սակայն միջնաժամկետ ծախսերը չեն համընկնում ՀԸԳՀ-ի առաջնահերթություններին: Փորձագետներն արծարծել են նաև հետևյալ խնդիրը. ՀԸԳՀ-ի կիրարկման գործընթացում բացակայում է դրա իրականացման համար ֆինանսական միջոցների բաշխման ընթացակարգը: Վերջինս հնարավորություն կընձեռի ավելի արդյունավետ և թիրախային միջոցներ ձեռնարկել՝ ՀԸԳՀ-ի իրականացման, ինչպես նաև դրա ազդեցության գնահատման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԸԳՀ-ի իրականացումը երիտասարդական ոլորտում չունի հստակ ուղղություն: Այնուամենայնիվ, ԵԽ-ի պորտֆելը ծառայում է թե՛ որպես ստանդարտ, թե՛ ուղղորդող շրջանակ: Պորտֆելը կիրառվել է նաև որպես մշտադիտարկման ուղենիշ: Մշտադիտարկման հիմնական եզրակացություններն արտացոլում են, թե որքանով են Հայաստանի երիտասարդական աշխատողների համար Հայաստանում անցկացված կրթական ծրագիրը և փորձի փոխանակման այցերը համապատասխանում Պորտֆելի սկզբունքներին և տրամաբանությանը:

Եզրակացություններ

- ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզում երիտասարդության ոլորտի համար նախատեսված միջոցառումները ներդրվել են, սակայն հստակ ցուցիչների բացակայության պատճառով դժվար է գնահատել ՀԸԳՀ-ի իրական ազդեցությունը երիտասարդության ոլորտի վրա:
- «Երիտասարդական աշխատանք» հասկացությունը և երիտասարդական աշխատողների դերը Հայաստանում ընդհանուր առմամբ համապատասխանում են եվրոպական մոտեցումներին:
- Հայաստանում երիտասարդական աշխատողների համար նախատեսված կրթական ծրագրերը կրում են նաև եվրոպական ստանդարտների և փորձի ազդեցությունը:
- Երիտասարդական աշխատողների վերապատրաստման հայաստանյան ծրագրերն արդյունավետ են փորձառու երիտասարդական աշխատողների համար, բայց դրանք սկսնակ երիտասարդական աշխատողներին երիտասարդական աշխատանքի համար պահանջվող ֆունդամենտալ գիտելիքներ չեն տալիս: Վերապատրաստման դասընթացների առկա մոդուլները ուղղված են ընդհանուր հմտությունների ձևավորմանը, մինչդեռ ավելի կոնկրետ հմտությունների զարգացման համար ավելի երկարաժամկետ ուսումնական ծրագրեր են պահանջվում:
- Առկա է խոր թերահավատություն և վստահության բացակայություն պետական կառույցների և որոշումներ կայացնողների նկատմամբ, ինչի մասին է վկայում երիտասարդների ցածր մասնակցությունը քաղաքական, քաղաքացիական և համայնքային գործունեությանը՝ չնայած նրանց ներգրավվածությունը խրախուսելուն ուղղված ջանքերին: Թեպետ երիտասարդական կենտրոնները տրամադրում են օգտակար ծառայություններ, ինչպիսիք են մասնագիտական խորհրդատվությունը և տնային առաջադրանքների կատարման հարցում օգնությունը, դրանք բավարար չեն երիտասարդների ավելի լայն կարիքները, այդ թվում՝ հոգեկան առողջությանն առնչվող հարցերում աջակցության, որոշումների կայացման գործընթացներում մասնակցության և անձնային աճի հնարավորությունների հետ կապված կարիքները բավարարելու համար:
- Չնայած բազմաթիվ նախաձեռնությունների և ծրագրերի առկայությանը՝ հստակ և չափելի ակնկալվող արդյունքներով ազգային միասնական երիտասարդական

ռազմավարության բացակայությունը խաթարում է երիտասարդական քաղաքականության ներդրման արդյունավետությունը և համակարգումը:

- Հետպատերազմական տրավմայի պատճառով դժվար է սահմանել ազդեցությունը և ապահովել հաշվետվողականություն, քանի որ չկա երիտասարդական քաղաքականության, երիտասարդական կենտրոնների և երիտասարդական աշխատողների համար նախատեսված ծրագրերին հետևելու, դրանց առաջընթացն արձանագրելու և գնահատելու ստանդարտացված համակարգ:
- Կան երիտասարդների բազում կարիքներ, որոնք երիտասարդական կենտրոնները մինչ այժմ չեն հասցեագրում: Քանի որ գոյություն չունի երիտասարդական կենտրոնների մշտադիտարկման և գնահատման համակարգ և մեխանիզմ, չկան կենտրոնների գործունեությանն առնչվող համապատասխան ցուցիչներ, ըստ որոնց ֆինանսական ռեսուրսները պետ է բաշխվեն, երիտասարդական քաղաքականություններ մշակողները չեն կարողանում մշտադիտարկել երիտասարդական կենտրոնների՝ բովանդակության մատուցումը:

Առաջարկություններ ուղղված

Կառավարությանը՝

- Համապատասխանեցնել միջնաժամկետ ծախսերը ՀԸԳՀ-ի իրականացման ճանապարհային քարտեզին: Ապահովել, որպեսզի ՀԸԳՀ-ի՝ երիտասարդական ոլորտին, հատկապես՝ կարողությունների զարգացմանը, երիտասարդական կենտրոններին և մասնակցային մեխանիզմներին առնչվող դրույթների իրականացման վերաբերյալ բյուջեի տողերը հստակորեն ներառված լինեն միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Քննարկել ԵՄ կողմից երիտասարդական քաղաքականության ֆինանսավորման հնարավորությունները՝ ՀԸԳՀ համահունչ:
- Իրականացնել կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ՝ ՀԸԳՀ-ով պահանջվող քաղաքականությունները, բարեփոխումները և կանոնակարգերն արդյունավետորեն պլանավորելու, կառավարելու, իրականացնելու, մշտադիտարկելու և գնահատելու ինստիտուցիոնալ կարողությունները բարելավելու համար: Երիտասարդական ոլորտում սա մասնավորապես վերաբերում է երիտասարդական ռազմավարության մշակմանը և երիտասարդական քաղաքականության մշտադիտարկման և գնահատման համապարփակ համակարգի ստեղծմանը:
- Մշակել որակական և քանակական ցուցիչներ՝ երիտասարդական ոլորտում ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզի համար՝ ներառելով փորձի փոխանակման և կարողությունների զարգացման ծրագրերի թիվը, ինչպես նաև հիմնական որակական փոփոխությունները (ԵԽ-ի պորտֆելի թեմաներ, գիտելիքների և կարողությունների աճ).

- երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացների մասնակիցների թիվը 2021-2025 թթ,
  երիտասարդական կենտրոններից առնվազն մեկ երիտասարդական աշխատողի մասնակցությունը կարողությունների զարգացման և փորձի փոխանակման ծրագրերին,
- բոլոր երիտասարդական կենտրոններում մասնակցային և երիտասարդների համար մատչելի մշտադիտարկման և գնահատման համակարգի հիմնում, որակական և քանակական ցուցիչների (այդ թվում՝ գիտելիքների և կարողությունների աճ, մոտիվացիայի աճ և այլն) սահմանում,,
- ԵԽ-ի պորտֆոլիոյի բոլոր թեմաներին առնչվող կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնություններ և գիտելիքների զարգացում/խորացում՝ ապահովելու համար երիտասարդական աշխատանքի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ, երիտասարդական աշխատանքի արդյունավետ իրականացման կարողություններ, դիրքորոշումներ և արժեքներ; երիտասարդական աշխատողների գիտելիքների և կարողությունների աճ, վերջիններիս մասնակցությունը կարողությունների զարգացման և փորձի փոխանակման ծրագրերին,
- երիտասարդական աշխատողների կողմից իրականացված ծրագրերի և նախաձեռնությունների թվաքանակը և շրջանակը,
- ի թիվս այլ ծրագրերի՝ վերոնշյալ ծրագրերին և նախաձեռնություններին մասնակցող երիտասարդների թիվը և պրոֆիլը
- երիտասարդական աշխատանքի ազդեցությունը երիտասարդների վրա այն համայնքներում, որոնցում երիտասարդական կենտրոններ են հիմնվել, այդ թվում՝ երիտասարդության կյանքի հիմնական փոփոխությունները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝

- Համապատասխանեցնել երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրերը ԵԽ-ի պորտֆոլիոյի շրջանակին և Երիտասարդական աշխատողների՝ միջազգային մակարդակում աշխատելու համար նախատեսված հմտությունների մոդելին, սկսնակ և փորձառու երիտասարդական աշխատողների համար ներդնել հմտահեն մոդուլային ատեստավորման ծրագիր, որը կհամապատասխանի ԵԽ-ի Երիտասարդական աշխատանքի պորտֆոլիոն, ներառել մենթորության և փորձառության վրա հիմնված ուսումնառության բաղադրիչներ, ինչպես նաև աստիճան շնորհող դասընթացներ մշակել երիտասարդական աշխատողների համար:

- Իրականացնել երիտասարդական աշխատանքում պահանջված հմտությունների քարտեզագրում՝ ելնելով երկրի կոնկրետ կարիքներից, իրականացնել հետազոտություններ և սահմանել փորձի փոխանակման և ուսումնական այցերի թեմաների ու թեմատիկ ոլորտների հստակ շրջանակ: Սույն հաշվետվությունն ընդգրկում է տեղեկատվություն հետևյալ թեմատիկ որորտների վերաբերյալ, օրինակ՝
    - Երիտասարդական կենտրոնների որակական ստանդարտները
    - Երիտասարդությունը և համայնքի կարիքները
    - Հոգեկան առողջություն և ինքնախնամք
    - Հուզական ինտելեկտ
    - Ինքնաբացահայտում
    - Նորարար տեխոնոլոգիաները և երիտասարդների կրթությունը, արհեստական բանականություն
    - Երիտասարդական աշխատանքի մասին ֆունդամենտալ գիտելիքներ
    - Երիտասարդական աշխատանքի ճանաչումը որպես մասնագիտություն, երիտասարդական աշխատանքի մասնագիտացումը
    - Երիտասարդական աշխատողների ասոցիացիայի հիմնում
    - Երիտասարդական աշխատողների դաշինքի հիմնում
- Սահմանել երիտասարդական կենտրոնների ազգային հավատարմագրման պահանջները և որակի ստանդարտները, ապահովել, որպեսզի կենտրոնները մատուցեն այնպիսի ծառայությունների ամբողջական շղթա, ինչպիսիք են մասնագիտական կողմնորոշումը, քաղաքացիական կրթությանը և հոգեկան առողջությանն առնչվող ծառայությունները, ինչպես նաև աջակցեն տնային աշխատանքի կատարման հարցում
- Մշակել և որդեգրել մշտադիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա երիտասարդական կենտրոնների ռեսուրսների վերաբաշխման ընթացակարգ:
- Ապահովել երիտասարդների ներգրավվածությունը երիտասարդական ծրագրերի, երիտասարդական կենտրոնների և քաղաքականությունների մշտադիտարկման և գնահատման գործում՝ խթանելով սեփականատիրական զգացումը և շահառուների առջև հաշվետվողականությունը:
- Ստեղծել թվային ռեսուրսների կենտրոններ, երիտասարդական աշխատողների համար էլեկտրոնային ուսումնառության և երիտասարդների ներգրավվածությանն ուղղված առցանց հարթակներ, որոնք հասանելի կլինեն անապահով և գյուղական համայնքների երիտասարդական խմբերին:
- Յուրաքանչյուր ուսումնական այցի համար մշակել ուսումնական հստակ պլան, ներառյալ՝ մասնակիցների նախնական և հետագա գնահատումները:
- Հայաստանը պետք է մշակի երիտասարդական աշխատանքի որակի ապահովման շրջանակ, որը հիմք կծառայի երիտասարդական աշխատողների կրթական ծրագրի համար:

Երիտասարդական աշխատողներին՝

- Մշակել ուսումնական այցերի և փոխանակման ծրագրերի պլան, որում կուրվագծվեն հայաստանյան փորձի ներկայացման և եվրոպական պրակտիկաներից սովորելու հիմնական կետերը:
- Ներգրավել երիտասարդներին երիտասարդական ծրագրերի և քաղաքականությունների մշտադիտարկման ու գնահատման գործում՝ նրանց շրջանում խթանելով սեփականատիրական զգացումը և շահառուների առջև հաշվետվողականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Երիտասարդների հզորացման և վերականգնման համապարփակ ուղեցույց, Երիտասարդական աշխատանք հակամարտությունների պայմաններում*, Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, 2024 թ.
2. *Երիտասարդական աշխատողների կրթության և վերապատրաստման՝ հմտությունների շրջանակները և հմտահեն մոտեցումները հինգ եվրոպական երկրներում*, 2022 թ., Երիտասարդական գործընկերություն, https://pjp-eu.coe.int/documents/42128013/131344248/Competence_frameworks.pdf/1fe47c41-e2eb-3e58-1a0c-042e7f73fed3
3. *Եվրոպական երիտասարդական կենտրոնների որակի ապահովման մոդելներ. Որակի նշան,* https://www.coe.int/en/web/youth/quality-label-for-youth-centres
4. Գալստյան Մ., *ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ եվ պրակտիկաներ:* Վերլուծական տեղեկագիր (Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն) 16 (2023): 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79
5. Գալստյան Մ., *Հեռավար ուսուցումը Հայաստանում համավարակի ժամանակ. դիսկուրս-վերլուծություն, 2021, Կրթությունը 21-րդ դարում*, *3*(2), 77-86, https://doi.org/10.46991/educ-21st-century.v2i6.11011
6. *Տեղական մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների ներգրավման ուղեցույց (հասկացություններ, մեթոդներ, մոդելներ, ձևաչափեր)*, «ԿԱԶԱ» հիմնադրամ, 2022 թ.
7. *Երիտասարդների բովանդակալից քաղաքական մասնակցությունը Եվրոպայում. հասկացություններ, միտումներ և քաղաքականությանը վերաբերող հետևություններ. հետազոտություն*, Եվրոպայի Խորհուրդ և Եվրոպական Հանձնաժողով, 2021 թ. սեպտեմբեր

8. *Հայաստանի երիտասարդական քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ,* Ռեստարտ Գյումրի» երիտասարդական քաղաքացիական կենտրոն ՀԿ, 2024 թ.
9. *Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն, ինստիտուտի ներկայիս վիճակը և կայացման հեռանկարները. հետազոտություն,* Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2016 թ.
10. *«Երիտասարդական միջավայրի» գործունեության ուղեցույց*, 2022 թ., Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
11. *Երիտասարդների մասնակցությունը Հայաստանում որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներին,* Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն, 2021
12. *Երիտասարդական քաղաքականության հիմունքներ,* Եվրոպայի Խորհուրդ, CM/Rec (2015)3
13. *Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույց,* Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 2022 թ., https://escs.am/files/files/2023-03-07/72fa538a5aba35a5492e1204f1505cb7.pdf.
14. *Երիտասարդական աշխատանքի հմտություն*, https://www.coe.int/en/web/youth-portfolio/youth-work-competence.
15. *Երիտասարդական աշխատանքը Արևելյան Եվրոպայում: իրողություններ, տեսանկյուններ և ոգեշնչող նախաձեռնություններ,* 2020 թ., Երիտասարդական գործընկերություն
16. *Երիտասարդական աշխատողների կրթությունը Եվրոպայում. Քաղաքականություններ, կառույցներ, պրակտիկաներ*, Երիտասարդության գիտելիքների գիրք 26, Եվրոպայի Խորհուրդ և Եվրոպական Հանձնաժողով, 2020 թ. ապրիլ

ՀԱՎԵԼՎԱԾ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Երիտասարդների շրջանում ֆոկուսխմբային քննարկման ուղեցույց

Ներածական հարցեր

1. Խնդրում ենք ներկայանալ. Ձեր տարիքը, կրթությունը, զբաղմունքը և հետաքրքրությունները:
2. Որո՞նք են Հայաստանում Ձեր հասակակից երիտասարդների հիմնական խնդիրները և ձգտումները:
3. Որո՞նք են Ձեր համայնքի երիտասարդների առաջ ծառացած հիմնական խնդիրները:

Երիտասարդների կարիքները

4. Անձամբ Ձեր կարծիքով՝ ի՞նչն է ամենադժվարը ներկայիս պայմաններում, և ըստ Ձեզ՝ երիտասարդների համար ի՞նչն է ամենադժվարը, օրինակ՝ աշխատանք, եկամուտ, քաղաքականություն, մշակույթ, սոցիալական շփումներ և այլն: Դուք և այլ երիտասարդները ի՞նչ եք պատրաստվում անել՝ հասցեագրելու համար այս խնդիրները՝ արտագա՞ղթ, ակտիվի՞զմ, կրթությո՞ւն կամ ա՞յլ գործողություններ:
5. Ինչպե՞ս եք մասնակցել պատերազմին: Պատերազմից հետո ի՞նչ փոխվեց Ձեր կյանքում և Ձեր մեջ: Ի՞նչ եք Դուք փոխել: Այս փոփոխությունները էակա՞ն էին, թե՞ աննշան: Խնդրում ենք օրինակներ բերել:
6. Որքանո՞վ եք գոհ Ձեր կյանքից: Որո՞նք են Ձեր հիմնական դժգոհությունները: Որո՞նք են Ձեր հիմնական մտահոգությունները, և ներկայումս Ձեզ ի՞նչն է անհագստացնում:

Երիտասարդական աշխատանք և երիտասարդական քաղաքականություն

7. Ի՞նչ տեսակի երիտասարդական ծրագրերի կամ կամավորական աշխատանքի եք մասնակցել: Ինչպե՞ս կգնահատեիք այդ ծրագրերի որակը: Դրանք Ձեզ ի՞նչ են տվել գիտելիքների, կարողությունների, ունակությունների կամ անձնային որակների առումով: Այս ծրագրերի արդյունքում Ձեր կյանքում ի՞նչ է փոխվել: Ինչպե՞ս կգնահատեիք Ձեզ հետ աշխատող մասնագետների գիտելիքները և կարողությունները: Որո՞նք են նրանց ուժեղ և թույլ կողմերը: Եթե հնարավորություն ունենայիք նրանց խորհուրդ տալ առ այն, թե ինչպես Հայաստանի այսօրվա երիտասարդության հետ իրենց աշխատանքն ավելի լավ կառուցեն կամ ինչ նոր կարողություններ ձեռք բերեն՝ իրենց աշխատանքի որակը բարելավելու համար, ի՞նչ խորհուրդներով և առաջարկություններով կկիսվեիք:
8. Պատերազմից հետո երիտասարդական ուղղվածությամբ աշխատանքում ի՞նչը և ինչպե՞ս պետք է փոխվի:
9. Ապագայի ի՞նչ ակնկալիքներ և մասնավորապես անձնական կյանքի ի՞նչ պլաններ ունեք: Ո՞ր կազմակերպություններից կամ անհատներից եք աջակցություն ակնկալում՝ այդ պլաններն իրականացնելու համար: Հայաստանի

ներկայիս իրավիճակը հաղթահարելու համար ո՞ր կազմակերպություններից եք ակտիվ միջոցառումներ ակնկալում:

10. Երիտասարդությանն ուղղված պետական քաղաքականություններից ի՞նչ ակնկալիքներ ունեք:
11. Տեղյա՞կ եք «Հայաստանի երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման գործընթացից: Ծանո՞թ եք դրա բովանդակությանը: Եթե այո, ինչպե՞ս եք ծանոթացել դրան: Խնդրում ենք կիսվել այս օրենքի վերաբերյալ Ձեր կարծիքներով և առաջարկություններով:

Եզրափակիչ հարցեր

12. Ի ամփոփումն այսօրվա քննարկման՝ կա՞ն մտքեր, որոնք անավարտ մնացին, կամ հարցեր, որոնք լիարժեք չքննարկվեցին: Եթե այո, կարող եք կիսվել դրանցով:

Շնորհակալություն մասնակցության համար:

Երիտասարդական հարցերով փորձագետների և դասընթացավարներ հետ հարցազրույցների ուղեցույց

Ներածական հարցեր

- Խնդրում ենք ներկայանալ: Որքան ժամանա՞կ է, ինչ աշխատում եք երիտասարդական ոլորտում:
- Որո՞նք են երիտասարդության, հատկապես՝ ամենախոցելի խմբերի երիտասարդների հիմնական կարիքները: Այս կարիքներից որո՞նք կարող են հասցեագրվել երիտասարդական աշխատանքի մեթոդաբանություններով:

Երիտասարդական աշխատողների կարիքների վերաբերյալ հարցեր

- Որո՞նք են երիտասարդական աշխատողների կրթական կարիքները:
- Որո՞նք են երիտասարդական աշխատողների ուժեղ և թույլ կողմերը:
- Ի՞նչ կրթական ծրագրեր են հասանելի երիտասարդական աշխատողներին: Երիտասարդական աշխատողների համար նախատեսված ինչպիսի՞ կրթական ծրագրեր կան (պետական, ՀԿ-ների կողմից առաջարկվող և միջազգային): Ինչպե՞ս կգնահատեիք դրանց արդյունավետությունը: Հայաստանում կա՞ն ծրագրեր, որոնք արդյունավետ են և որոնք արժե ընդլայնել: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել: Ըստ Ձեզ՝ որո՞նք են նման պրակտիկաների տարածման նախադրյալները և խոչընդոտները:
- Կա՞ն բարեհաջող միջազգային պրակտիկաներ, որոնք կարող են տեղայնացվել Հայաստանում: Խնդրում ենք նկարագրել դրանք և հիմնավորել Ձեր առաջարկությունները: Ձեր ընկալմամբ՝ որո՞նք են նման պրակտիկաների տեղայնացման նախադրյալները և խոչընդոտները:
- Տեղյա՞կ եք «Հայաստանի երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման գործընթացից: Ծանո՞թ եք դրա բովանդակությանը: Եթե այո,

ինչպե՞ս եք ծանոթացել դրան: Խնդրում ենք կիսվել այս օրենքի վերաբերյալ Ձեր կարծիքներով և առաջարկություններով:

Երիտասարդական աշխատողների համար նախատեսված միջազգային կրթական ծրագրերի մասին հարցեր

- Երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների փոխանակման և վերապատրաստման ի՞նչ ծրագրեր են իրականացվել Հայաստանի և ԵՄ-ի միջև: Ինչպե՞ս կգնահատեիք դրանց արդյունավետությունը: Ի՞նչ նոր գիտելիքներ և կարողություններ են երիտասարդական աշխատողները և քաղաքականություն մշակողները ձեռք բերել: Ի՞նչպիսի փորձի փոխանակում է տեղի ունեցել, ո՞ր երկրների պրակտիկաներն եք ուսումնասիրել և ինչո՞ւ: Արդյունքներն ինչպե՞ս եք կիրառել:
- ԵՄ անդամ պետությունների երիտասարդական կենտրոններում կազմկերպվե՞լ է փորձնակություն հայ երիտասարդական աշխատողների համար, ովքեր Հայաստանում մասնակցել և հաջողությամբ ավարտել են վերապատրաստման ծրագրերը: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել: Եթե ոչ, ինչո՞ւ ոչ: Ինչպե՞ս կգնահատեիք նման նախաձեռնության կարևորությունը և իրագործելիությունը: Ի՞նչ խոչընդոտների եք բախվել դրա իրականացման փորձերի ընթացքում:

Առանցքային տեղեկատուների՝ երիտասարդական քաղաքականություններ մշակողների, կառավարության ներկայացուցիչների հետ հարցազրույցների ուղեցույց

Ներածական հարցեր

- Խնդրում ենք ներկայանալ: Որքա՞ն ժամանակ է, ինչ զբաղվում եք երիտասարդությանն առնչվող հարցերով:
- Որո՞նք են երիտասարդության, հատկապես՝ ամենախոցելի խմբերի երիտասարդների հիմնական կարիքները: Այս կարիքներից որո՞նք կարող են հասցեագրվել երիտասարդական աշխատանքի մեթոդաբանություններով:

Երիտասարդական աշխատողների կարիքների վերաբերյալ հարցեր

- Որո՞նք են երիտասարդական աշխատողների կրթական կարիքները:
- Որո՞նք են երիտասարդական աշխատողների ուժեղ և թույլ կողմերը:
- Երիտասարդական աշխատողների համար ի՞նչ կրթական ծրագրեր են հասանելի (պետական, ՀԿ-ների կողմից առաջարկվող և միջազգային): Ինչպե՞ս կգնահատեիք դրանց արդյունավետությունը: Հայաստանում կա՞ն ծրագրեր, որոնք արդյունավետ են և ավելի լայն տարածում են պահանջում: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել: Ըստ Ձեզ՝ որո՞նք են նման պրակտիկաների տարածման նախադրյալները և խոչընդոտները: Հայաստանում երիտասարդական կենտրոնների հիմնումը ներկայումս ակտիվ փուլում է: Ինպե՞ս են երիտասարդական կենտրոններն ընտրվում, ինչպիսի՞

վերապատրաստում է իրականացվում վերջիններիս համար, և ինչպե՞ս է դա իրականացվում:
- Կա՞ն բարեհաջող միջազգային պրակտիկաներ, որոնք կարող են տեղայնացվել Հայաստանում: Խնդրում ենք նկարագրել դրանք և հիմնավորել Ձեր առաջարկությունները: Ձեր ընկալմամբ՝ որո՞նք են նման պրակտիկաների տեղայնացման նախադրյալները և խոչընդոտները:

Երիտասարդական աշխատողների համար նախատեսված միջազգային կրթական ծրագրերի մասին հարցեր

- Երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների փոխանակման և վերապատրաստման ի՞նչ ծրագրեր են իրականացվել Հայաստանի և ԵՄ-ի միջև: Ինչպե՞ս կգնահատեիք դրանց արդյունավետությունը: Ի՞նչ նոր գիտելիքներ և կարողություններ են երիտասարդական աշխատողները և քաղաքականություն մշակողները ձեռք բերել: Ի՞նչպիսի փորձի փոխանակում է տեղի ունեցել, ո՞ր երկրների պրակտիկաներն եք ուսումնասիրել և ինչո՞ւ: Արդյունքներն ինչպե՞ս եք կիրառել:
- ԵՄ անդամ պետությունների երիտասարդական կենտրոններում կազմկերպվե՞լ է փորձնակություն հայ երիտասարդական աշխատողների համար, ովքեր Հայաստանում մասնակցել են վերապատրաստման ծրագրերի և հաջողությամբ ավարտել են դրանք: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել: Եթե ոչ, ինչո՞ւ ոչ: Ինչպե՞ս կգնահատեիք նման նախաձեռնության ազեցությունը, կարևորությունը և իրագործելիությունը: Ի՞նչ խոչընդոտների եք բախվել դրա իրականացման փորձերի ընթացքում:

ՀԸԳՀ-ի իրականացումն ու մշտադիտարկումը

- ՀԸԳՀ-ի դրույթների, ներառյալ՝ երիտասարդական ոլորտին առնչվող նպատակների իրականացման ուղղությամբ ի՞նչ էական քայլեր են ձեռնարկվել:
- Կառավորությունն ի՞նչ մեխանիզմներ է կիրառում՝ ՀԸԳՀ-ի, ներառյալ՝ երիտասարդությանն առնչվող նպատակների իրականացման առաջընթացի մշտադիտարկման և գնահատման համար:
- Ի՞նչ հաջողություններ կամ էական փոփոխություններ են Հայաստանում արձանագրվել ՀԸԳՀ-ի շրջանակում, այդ թվում՝ երիտասարդության ոլորտում իրագործված գործողությունների արդյունքում:
- ՀԸԳՀ-ի, ներառյալ՝ երիտասարդական ոլորտին առնչվող նպատակների իրականցման ընթացքում ի՞նչ էական մարտահրավերներ են առաջացել:
- Երիտասարդական ծրագրերի համատեքստում ԵՄ երկրների հետ ինչպիսի՞ համագործակցություն է ստեղծվել:
- Ինչպիսի՞ ֆինանսատեխնիկական օժանդակություն է ստացվել ԵՄ-ից՝ երիտասարդական ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար:

- Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել ՀԸԳՀ-ում ամրագրված և երիտասարդական ոլորտին առնչվող միջազգային ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:
- Ներկայումս ի՞նչ քայլեր են իրականացվում ՀԸԳՀ-ի խմբագրման/լրամշակման և արդիականացման ուղղությամբ: Ինչպե՞ս են ցուցիչներ մշակվում: Կա՞ն ցուցիչների մշակման նոր մոտեցումներ, ինչպիսիք են թիրախները կամ չափման մեթոդները:

Երիտասարդական աշխատողների հետ խորքային հարցազրույցների ուղեցույց

Ներածական հարցեր

- Խնդրում ենք ներկայնալ: Որքա՞ն ժամանակ է, ինչ աշխատում եք երիտասարդական ոլորտում, և մասնագիտական ի՞նչ կրթություն ունեք:
- Որո՞նք են երիտասարդության, հատկապես՝ ամենախոցելի խմբերի երիտասարդների հիմնական կարիքները: Այս կարիքներից որո՞նք կարող են հասցեագրվել երիտասարդական աշխատանքի մեթոդաբանություններով:

Երիտասարդական աշխատանքի փորձը

- Որքա՞ն ժամանակ է, ինչ ներգրավված եք երիտասարդական աշխատանքում, և ինչպե՞ս եք սկսել այս մասնագիտական ուղին:
- Ի՞նչ դասընթացների/վերապատրաստումների կամ կրթական ծրագրերի եք մասնակցել: Ի՞նչ եք սովորել, և ի՞նչ կարողություններ ու ունակություններ են Ձեր մեջ զարգացել դրանց շնորհիվ:
- Մասնակցե՞լ եք պետության կողմից հովանավորվող, ՀԿ-ների կողմից իրականացվող կամ միջազգային կրթական ծրագրերի: Խնդրում ենք կիսվել մանրամասներով և նկարագրել, թե ինչ կարողություններ եք ձեռք բերել այս ծրագրերի արդյունքում: Որպես երիտասարդական աշխատող՝ Ձեզ համար Ձեր մասնակցած ո՞ր կրթական ծրագիրը/ծրագրերն է/են ամենից արդյունավետ եղել: Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:
- Ինչպե՞ս եք կիրառել այդ գիտելիքները և կարողությունները: Ի՞նչ տեսակի ծրագրեր եք իրականացրել: Երիտասարդների ո՞ր խմբերի հետ եք աշխատել: Ինչպիսի՞ կարիքներ եք հասցեագրել: Կարողացե՞լ եք հասնել Ձեր նպատակներին: Եթե ոչ, ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է այդպես ստացվել:
- Ներկայումս ի՞նչ կրթական ծրագրերի կարիք ունեք: Ո՞վ պետք է բավարարի այդ կարիքները:

Եզրափակիչ հարցեր

- Տեղյա՞կ եք «Հայաստանի երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման գործընթացից: Ծանո՞թ եք դրա բովանդակությանը: Եթե այո, ինչպե՞ս եք ծանոթացել դրան: Խնդրում ենք կիսվել Ձեր կարծիքներով և առաջարկություններով:
- Կա՞ն կետեր, որոնք համակողմանիորեն չարծարծվեցին կամ լիարժեք չքննարկվեցին: Եթե այո, կարող եք կիսվել դրանցով: